

3503

Горькая
Судья
Судья

Г. Горькая

1900

491.99-8

7-23

610

8 2002

2010

44
7-23



ՄԱՐԿԱԿՈՒԹԻՒՆ ԴԱԹԵԱՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԸՆԹԱՑՔ
ՇԱՐԱԳՐՈՒԹԵԱՆ

ԵՒ
ՎԱՅԵԼՉԱԽՕՍՈՒԹԵԱՆ

Գ. Տ Գ

ՊԱՏՐԱՍԵՑ
ՍՄԲԱՏ ԴԱԹԵԱՆ

Վաւերացում
ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐ. ՎԱՐՁՈՒԹԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԷՆ

معارف نظارت جلیله سنک ۲۹۲ نومرولی فی ۱۷ تشرین اول ۳۱۶
تاریخی رخصتنامه سیله طبع اولمشدر

495
6-74



Կ. ՊՈԼԻՍ
ԳՐԱՏՈՒՆ, Գ. ՊԱՂՏԱՍԻԱՆ
ՏՊԱԳԸ, Գ. ՄԵՆԱՍԻԱՆ
Սուրբու Շահալ հաստի, 14
1900

491.99-8 ԼՂ. 231

7-23 ԳՈՐԾՆԱԿԱՆ ԸՆԹԱՑՔ

ՇԱՐԱԴՐՈՒԹԵԱՆ

ԵՒ

ՎԱՅԵԼԶԱԽՕՍՈՒԹԵԱՆ

425

56-94

ՊԱՏՐԱՍԵՑ

ՍՄԲԱՏ ԴԱԻԹԵԱՆ



1004
16391

Վաւերացում

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐ. ՎԱՐՁՈՒԹԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԷՆ



Կ. ՊՈԼԻՍ

ԳՐԱՏՈՒՆ Գ. ՊԱՂՏԱՏԼԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Կ. ՄԻՆԱՍԵԱՆ

Սուրբան Համալ հասցէսի, Թիւ 14

1900



12337

Շարադրութեան Գործնական Ընթացքի

ԱՅՍ Գ. ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՌԹՈՒ

ՔԱՆԻ ՄԸ ԽԾՄՔ

ՈՒՍՈՒՑԻՉ ԲԱՐԵԿԱՄՆԵՐՈՒՍ



Ազգ. Դաստիարակներուն կ'ուղղեմ խօսքս՝ մանաւանդ հայ լեզուի մեծարոյ ուսուցիչներուն, որոնք, իմ կարծիքով, ուրիշ երկրներու դասախօսներէն շա՛տ աւելի կարեւոր, շա՛տ աւելի կենսական գործ մը՝ մասադ հայ սերունդը գերազանցօրէն շահագրգռող պատճօն մը ու առաջնակարգ դեր մը ունին կատարել մեր կրթական յարկերուն մէջ, վասն զի անո՛նք են որ հայ մանուկներուն պիտի աւանդեն հայ լեզուն, եւ ասով՝ Մօր նուիրական դերին շարունակողն են, ըսել է: Ուսանող մանուկներուն քով ձեր ունեցած այս կոչումին, ազնիւ ուսուցիչներ, ծառայած ըլլալու համար, չի բաւեր հարեւանցի եւ «պարտականութենէ դրդուած» պայմանագրական ոճով մը դաս տալ ձեր երկրը. պէ՛տ է այլապէս շահեկան, այլապէս գրաւիչ ու սիրելի ընծայել մայրենի լեզուն:

Հոս՝ սեղը չէ մանրամասնօրէն ցոյց տալ թէ այդ նրպասակին հասնելու համար անհրաժեշտ եղող միջոցները որո՛նք են, թէ ի՛նչ ուղղութեամբ ու ծրագրով լեզուական ուսման զանազան հնարքները պիտի կիրարկէ՛ք: Միայն այս գրքի սահմանին մէջ մնալով՝ կ'ըսեմ թէ Շարադրութեան Դասը մէկն է ու թերեւս գլխաւորը՝ այն ազդեցիկ սասարներէն, որ կրնան նպաստել այդ նպատակը

աւելի շուտ, աւելի արդիւնաւոր կերպով ձեռք բերելու համար: Ինչպէս ըսած ենք յաշորդ էջերուն մէջ, դասաւանդման եղանակին վրայ խօսելու առթիւ, «Լեզուին ուղղակի ուսումը, քերականութիւն, բացատրեալ ընթերցումներ, արտասանական դասեր անուշտ կարելու պայմաններ ու սասար են լեզուին ընելանալու. բայց շարադրական յասուկ վարժութիւններ անհրաժեշտ են գրով իր գաղափարներն յայտնելու ունակութիւնն ու դիւրութիւնը տալու համար աւակերտին, սորվեցընելու զայն՝ խորհրդածելու տրուած կամ առաջին ունեցած նիւթի մը վրայ՝ գտնելու համար գլխաւոր գաղափարի մը մէջ պարունակուած երկրորդական գաղափարները, ամբողջի մը մասերը, նախադասութեան մը փաստերը կամ հետեւութիւնները, փնտռելու համար իր յիշողութեան մէջ պատկերի մը գիծերը, զգացման կամ տպաւորութեան մը ցոլացումները, եւ վերջապէս ընտրելու եւ որոշելու համար իր յղացումներուն արտայայտութեան յարմարագոյն կարգն ու բացատրութիւնները: Առանց այս վարժութեանց, եւ հակառակ լեզուին ուսմամբ ստացուած գրական պատարին, դպրոցէն անցնող շատերուն համար շարադրելը անմասշտիկ ու խրտեցուցիչ արուեստ մը կը մնայ:»

Ի՞նչ կը յիշեմ այն տնօրէնները զոր կրած եմ ուսուցչութեան տարիներուս մէջ՝ աւանդելու համար այս կարելու նիւղը, Շարադրութիւնը: Ան շատ վերջերս էր որ՝ գաւառի անկիւններէն՝ հետաքրքիր նորանոր մեքոսներու, որպէս զի օր օրի աւելի դիւրացընեմ իմ սաներուս գործը՝ ձեռք անցուցի Գառէ է Մօայի Ֆրանսերէն հաստները, եւ նմարտապէս գիւտ մը ընողի եռանդուն քափով սկսայ ուսումնասիրել զանոնք, քափանցելու համար անոնց մեքոսին, եւ, եթէ կարիքի է, օգտուելով անոնցմէ՝ նպաստ մը բերել Ֆրանսական մանկավարժութեան այդ նիւղէն՝ հայ-կրթական գործին:

Նայա մտածեցի նոյնութեամբ հայացընել եւ մասամբ ալ գործադրեցի իմ փորձերս, սակայն, դիտելով միջավայրի, գաղափարներու, լեզուի եւ ուրիշ տարբերութիւնները, չյամեցայ գալ սա գաղափարին թէ հայ տղաք վարժելու համար հայերէնի շարադրութեան, հարկ է ինչ ինչ բարեփոխումներ ներմուծել, յաւելումներ ու յապաւումներ ընել, առանց որու, մեքոսը անգործադրելի պիտի մնար մեր մէջ, եւ ձեռնարկն անօգուտ ու ապարդիւն:

Այսօր, այդ բուականէն իբր տարբար տարի վերջը, ուրախ եմ յայտարարելու թէ այդ մտածումներս սխալ ու անհաւանի չեն եղեր, եւ թէ «Շարադրութեան Գործնական այս Ընթացքը», զո՞նք մինչեւ այսօր, լաւագոյն դասուած ու դիւրութիւնն է, եւ անոր դիւրութիւնը ըմբռնուած է ազգին բանիմաց ուսուցիչներէն, որոնք յաջողապէս սկսան գործադրել ընդունուած մեքոսը ու շարադրութեան պէտք անհամեմատ կարելուութիւն ունեցող ուսում մը տանելու ընել: Դիւրութեամբ դաս տալ ու քիչ ժամանակի մէջ, բանաւոր ասիւնանաւորութեամբ տղաք գրելու վարժեցընել՝ զանոնք կարող ընել իրենց լեզուն գործածելու՝ ըստ բուականին դիւրութեամբ ու մտքութեամբ:

Ուրիշ հասարի մը (*Սկզբունք Համաձայնութեան եւ Շարադրութեան*) մէջ աւակերտը կ'ընելանայ բառերու կանոնաւոր կիրառութեան, կը սկսի բնական կարգ մը դնել իր գրութեանց մէջ, իր գրիչը սահուն ու նկուն կերպով գործածել. իսկ հոս կը ստանայ շարադրելու վարժութիւն, իր բառերու եւ գաղափարներու մեքոսը կ'աւելցընէ, եւ լեզուագիտական գիտեր կ'ընէ, եւ գիտակից ծանօթութիւններ կը ստանայ գրելու արուեստին վրայ որ իր կեանքին մէջ առաջդիմելու գործիք մը պիտի ըլլայ իր ձեռքը:

Լեզուի մասին, շանայած ենք պահել միօրինակութիւն՝ համաձայն մեր ՏԱՐԲԱԿԱՆԵ ԵՒ ԼՐԱՅՈՒՑԻՉ ԳԵՐԱԿԱՆ:

ՆՈՒԹԵԱՆՑ ուղղութեան եւ մեծայայտ եմք թէ ասկէ վերջն ալ աւելի ու աւելի խնամով պիտի ուսուցուի Շարադրութեան ճիւղը որ գործնական կեանքի մէջ տոգոյս այնքան օգտակար պիտի ըլլայ որքան պիտի նպաստէ Մայրենի լեզուի հիմնաւոր ուսման :

Այս մեթոտին հետեւողները նկատած են անուշտ թէ մեր մասնաւոր դիտումը չէ եղած գրական ու գրագիտական անհարկի ձեւեր ու ոճերու բունագրութիւնը առկայութեամբ, ինչպէս կ'ընէին հին հայկաբան ուսուցիչները, որոնք ո՛ր եւ է նիւթ կուտային՝ (ընդհանրապէս նկատագրական « վսեմ » նիւթեր), որպէս զի առկայութեամբ ինքնին խմբագրեան զայն՝ առանց առաջնորդելու անփորձ ուսանողին նախախալերուն, առանց ո՛ր եւ է աստիճանաւորում ղնելու դասաւանդման մէջ, առանց տալու ծրագիրն ու գլխաւոր գաղափարները : Ու գիտեմք թէ ի՛նչ անել կացութեան կը մասնուէին նորընծայ տղանքը . կա՛մ անյաջող, անկերպարան, անյարիբ գրուածք մը կը բերէին իբրեւ շարադրութիւն, եւ կա՛մ — եթէ նոյն նիւթին վրայ որ եւ է հեղինակներու հանդիպած էին — անոնց մէջէն ընդօրինակումներ կ'ընէին ու իբրեւ իրենցը կը կլնեցնէին :

Ուրախ ըլլալու եմք որ այս վերջին տեսնեալ տարիներու ընթացքին մէջ մեծ մասով այդ հին ու անգործնական դրութիւնը մէկդի բողբոջելով՝ սկսուած է աստիճանական զարգացման ուժ ու կարեւորութիւն տալ եւ տարակոյս չկայ թէ աւելի արդիւնք ձեռք բերուած է . այս ենթագրութիւնը ընելու իրաւունք ունինք՝ տեսնելով որ օր օրի աւելի յարգ կ'ընծայուի այս գրքին, որուն նախորդ երկու տպագրութիւնները՝ բազմաթիւ օրինակ՝ սպառուելով անա այս անգամ կը ձեռնարկենք նորագոյն տպագրութեան :

Կ. Պոլիս, 1 Հոկտեմբեր 1900

Ս. ՌԱԻԹԵԱՆ

1. Լեզուի ուսման համար կատարուած բոլոր հրահանգներ, ուղղագրութիւն, քերականութիւն, վերլուծութիւն, եւ այլն, ամէնն ալ միջոցներ կամ օժանդակներ են միայն . միակ նպատակ մը կայ որուն կ'ուզենք հասնիլ . այն՝ թէ տղայ մը դպրոցէն ելլելուն, կարենայ-իր գաղափարը, գրաւոր թէ բերանացի, արտայայտել ուղիղ, բանաւոր եւ վայելուչ կերպով : Ինչո՞ւ ուրեմն, երբ մանուկը գրավարժութեան մէջ բաւական յաջողակ է, չսկսինք — այդ ատենէն իսկ — անոր սորվեցնել իր խորհած ի գիր առնելու, այսինքն կամաց կամաց անոր առաջնորդելու զէպի այդ հետաւոր նպատակը : Պիտի առարկուի թէ, պէտք է որ շարադրելէ առաջ, տղան Ուղղագրութեան եւ Քերականութեան մէջ վարժ ըլլայ եւ բաւականաչափ պաշար ունենայ բառերու : Կը պատասխանենք թէ նոյն իսկ այդ բաները սորվելու ամենէն ազդու միջոցն է Շարադրել :

2. Ուղղագրութիւն . ժամանակաւ, ուղղագրական վարժութիւններու մեծ կարեւորութիւն կ'ընծայուէր (*), Ուղղագրութիւնն, այո՛, նորավարժներու համար օգտակար է, բայց զարգացեալներու համար այդ պէտքն ու օգուտը կը նուազի աստիճանաբար : Այժմէն իսկ փափաքելի եւ մաղթելի է որ այլեւս ճանչցուի թէ, նոյն իսկ նախակրթարանէն սկսեալ, Շարադրութիւնն է միակ եւ լաւագոյն միջոցն ուղղագրութիւն սորվելու եւ ապացուցանելու թէ սորվուած է : Ուղղագրութեան մէջ տղաք

(*) Մեր դպրոցներու մէջ այդ պէտքն ալ դեռ չէ ճանչցուած ըստ արժանւոյն, սա սխալ կարծիքով թէ Հայերէնի ուղղագրութիւնը ճանկա կամ Գաղղ. լեզուներու ուղղագրութեան չափ դժուար չէ :

յաճախ կը հանդիպին այնպիսի բառերու զորոնք չեն հասկընար եւ գուցէ մէկ մ'ալ չպիտի տեսնեն: Այդ բառերուն ձեւը իրենց երեւակայութեան մէջէն կ'անցնի առանց կանգ առնելու, նման օտարականի մը դէմքին զոր անցողակի կը տեսնեն եւ շուտ մը կը մոռնան: Բայց նոյնը չէ շարադրութեան մէջ. երբ տղան կը շարադրէ կամ կը խմբագրէ, գործածած բառերը իր իսկ բառերն են, ինքն իսկ գտած է այդ բառերը, կը ճանչնայ ու կը հասկընայ զանոնք եւ իր մտքին մէջ հիմնովի կը տպաւորուին թէ՛ իմաստով, թէ՛ ձեւով:

3. Քերականութիւնն ու վերլուծութիւնը լոկ տեսական վարժութիւններ են եւ աշակերտին համար տաղտկաբեր, մթին, խրթին եւ ապարդիւն, եթէ գործնականին՝ այսինքն Շարադրութեան հետ խառն չեն աւանդուիր. նոյն իսկ այս գործնական մասը տեսականէն առաջ անցնելու է: Իրաւամբ կ'ուզուի որ տղան հիմնովին հասկընայ խօսքի մը կազմութեան եղանակը. բայց միթէ վերլուծութիւնը միակ եւ լաւագոյն միջոցն է առ այս: Հեղինակէ մը առնուած խօսքեր լուծել տուէք տղու մը: Յաճախ այդ խօսքերը դժուար են, եւ տղան, ըստ բաղդին, քերականական-արուեստական բառեր պատշաճեցընելով անոնց՝ լոկ մեքենական գործ մը կը կատարէ, վասն զի բնագիրը չի հասկնար, որով ժամանակ եւ աշխատութիւն կը վատնէ ի դուր: Սակայն այս վերլուծուելիք խօսքերը, եթէ զիւրին ալ ըլլան, նորէն ժամանակն ու մպկտ կը վատնուի, վասն զի համեմատաբար թեթեւ աշխատութիւն մը տալ հարկ պիտի ըլլայ: Խնդիրը տարբեր է երբ տղան ինքնին կը կազմէ խօսք մը. յայնժամ գործնական վերլուծութիւն կ'ընէ իր ըմբռնած չափով եւ եղանակով. այս պարագային, աշխատութիւնն ընդունայն չ'ըլլար: Աւելի բացայայտ խօսելով՝ խօսքի մը մասերը գտնելու, զանոնք ինքնին կազմելու համար, յանդէստ

անզգալաբար՝ կը հարկադրի քերականական պատճառաւորութիւն մ'ընել եւ այս՝ բնազդական ճիգով մը միայն: Արդ՝ ամէն զարգացում համեմատական է ըլլալիք ջանքին հետ: Մեր դասատուներ՝ գրեթէ ամէնն ալ աս փորձն ըրած են կամ կ'ընեն. աշակերտին կը ցուցընեն ո՛ր եւ է աշխարհացոյց քարտէս մը ուր գլխաւոր քաղաքներու անունները գրուած են. այս անունները կարդալ կուտան աշակերտին եւ բազմիցս ալ կրկնել՝ յեղյեղել կուտան, սակայն աշակերտը դժուար կ'ըմբռնէ զանոնք. ինչո՞ւ. — վասն զի քիչ աշխատութիւն կուտայ, Հիմայ ուրիշ քարտէս մը ցուցուցէք, առաջինին յար եւ նման. բայց անուններուն տեղը պարապ թողուած՝ համր քարտէս մը Քաղաքի մը տեղը մատնանիչ ընելով՝ հարցուցէք թէ ի՞նչ անունն դնելու է հոն: Պիտի տեսնէք որ աշակերտները ճիգ մ'ընել պիտի հարկադրուին, եւ որովհետեւ նոյն անունը փնտրել հարկ եղաւ, զայն ապահովապէս պիտի միտք պահեն: Պատրաստ եւ շարադրուած խօսքեր լուծել տալը նման է գրուած քարտէսի մը վրայ աշխարհագրութիւն աւանդելու, իսկ շարադրութեան միջոցաւ վերլուծութիւն աւանդելը՝ համր քարտէսի վրայ աշխարհագրութիւն ուսուցանել է:

4. Բառերու պաշար: Տղան բառերու մեծ պաշար մը չունի, պէտք է իրեն բառեր սորվեցընել: Ահա այս պէտքը լեցընելու համար է որ գրքուկիս մէջ գրուած են բազմաթիւ հրահանգներ, Բայց մեր կարծիքով, շարադրութիւնն ալ բառեր գտնել կուտայ: Մեր կարծածէն եւ նոյն իսկ իր կարծածէն աւելի բառ դիտէ տղան. Իր մտքին մէջ կը ծփան խել մը բառեր զորոնք կարգացեր (*) կամ լսեր

(*) Կ'ենթադրուի թէ աշակերտները այլ և այլ հրահանգիչ գրքեր կարգալու փոփառող են: Դասատուն պէտք է ամէն միջոց ի գործ դնէ և յորդորէ աշակերտներն ըստ կարի շատ կարգալու օգտակար գրքեր:

յաճախ կը հանդիպին այնպիսի բառերու զորոնք չեն հասկընար եւ գուցէ մէկ մ'ալ չպիտի տեսնեն։ Այդ բառերուն ձեւը իրենց երեւակայութեան մէջէն կ'անցնի առանց կանգ առնելու, նման օտարականի մը դէմքին զոր անցողակի կը տեսնեն եւ շուտ մը կը մոռնան։ Բայց նոյնը չէ շարադրութեան մէջ. երբ տղան կը շարագրէ կամ կը խմբագրէ, գործածած բառերը իր իսկ բառերն են, ինքն իսկ գտած է այդ բառերը, կը ճանչնայ ու կը հասկընայ զանոնք եւ իր մտքին մէջ հիմնովի կը տպաւորուին թէ՛ իմաստով, թէ՛ ձեւով։

3. Քերականութիւնն ու վերջածոքիւնը լոկ տեսակակն վարժութիւններ են եւ աշակերտին համար տաղտկաբեր, միջին, խրթին եւ ապարդիւն, եթէ գործնականին՝ այսինքն Շարադրութեան հետ խառն չեն աւանդուիր. նոյն իսկ այս գործնական մասը տեսականէն առաջ անցնելու է։ Իրաւամբ կ'ուզուի որ տղան հիմնովին հասկընայ խօսքի մը կազմութեան եղանակը. բայց միթէ վերլուծութիւնը միակ եւ լաւագոյն միջոցն է առ այս։ Հեղինակէ մը առնուած խօսքեր լուծել տուէք տղու մը։ Յաճախ այդ խօսքերը դժուար են, եւ տղան, ըստ բաղդին, քերականական-արուեստական բառեր պատշաճեցընելով անոնց՝ լոկ մեքենական գործ մը կը կատարէ, վասն զի բնագիրը չի հասկնար, որով ժամանակ եւ աշխատութիւն կը վատնէ ի դուր։ Սակայն այս վերլուծուելիք խօսքերը, եթէ դիւրին ալ ըլլան, նորէն ժամանակն ումպէտ կը վատնուի, վասն զի համեմատաբար թեթեւ աշխատութիւն մը տալ հարկ պիտի ըլլայ։ Խնդիրը տարբեր է երբ տղան ինքնին կը կազմէ խօսք մը. յայնժամ գործնական վերջածոքիւն կ'ընէ իր ըմբռնած չափով եւ եղանակով. այս պարագային, աշխատութիւնն ընդունայն չ'ըլլար։ Աւելի բացայայտ խօսելով՝ խօսքի մը մասերը գտնելու, զանոնք ինքնին կազմելու համար, յանդէս

անզգալաբար՝ կը հարկադրի քերականական պատճառաւորութիւն մ'ընել եւ այս՝ բնազդական ճիգով մը միայն։ Արդ՝ ամէն զարգացում համեմատական է ըլլալիք ջանքին հետ։ Մեր դասատուներ՝ գրեթէ ամէնն ալ աս փորձն ըրած են կամ կ'ընեն. աշակերտին կը ցուցընեն ո՛ր եւ է աշխարհացոյց քարտէս մը ուր գլխաւոր քաղաքներու անունները գրուած են. այս անունները կարգալ կուտան աշակերտին եւ բազմիցս ալ կրկնել՝ յեղյեղել կուտան, սակայն աշակերտը դժուար կ'ըմբռնէ զանոնք. ինչո՞ւ. — վասն զի քիչ աշխատութիւն կուտայ։ Հիմայ ուրիշ քարտէս մը ցուցուցէք, առաջինին յար եւ նման. բայց անուններուն տեղը պարապ թողուած՝ համր քարտէս մը։ Քաղաքի մը տեղը մատնանիչ ընելով՝ հարցուցէք թէ ի՞նչ անուն զնելու է հոն։ Պիտի տեսնէք որ աշակերտները ճիգ մ'ընել պիտի հարկադրուին, եւ որովհետեւ նոյն անունը փնտնել հարկ եղաւ, զայն ապահովապէս պիտի միտք պահեն։ Պատրաստ եւ շարադրուած խօսքեր լուծել տալը նման է գրուած քարտէսի մը վրայ աշխարհագրութիւն աւանդելու, իսկ շարադրութեան միջոցաւ վերլուծութիւն աւանդելը՝ համր քարտէսի վրայ աշխարհագրութիւն ուսուցանել է։

4. Բառերու պաշար։ Տղան բառերու մեծ պաշար մը չունի, պէտք է իրեն բառեր սորվեցընել։ Ահա այս պէտքը լեցընելու համար է որ գրքուկիս մէջ գրուած են բազմաթիւ հրահանգներ, Բայց մեր կարծիքով, շարադրութիւնն ալ բառեր զտնել կուտայ։ Մեր կարծածէն եւ նոյն իսկ իր կարծածէն աւելի բառ գիտէ տղան. Իր մտքին մէջ կը ծփան խել մը բառեր զորոնք կարդացեր (*) կամ լսեր

(*) Կ'ենթադրուի թէ աշակերտները ալ և ալ հրահանգիչ գրքեր կարգալու փափաքող են. Դասատուն պէտք է ամէն միշտ ի գործ դնէ և յորդորէ աշակերտներն ըստ կարի շատ կարգալու օգտակար գրքեր։

է. Եթէ այդ բառերը չպրպտուին եւ ի կիր չառնուին, տակաւ կը մոռցուին: Իսկ եթէ, ընդհակառակն, դաղափար մ'արտայայտելու հարկին տակ գտնուի աչակերտը, նոյն բառերը պիտի սկսին երեւան գալ իր շրթունքին վրայ կամ գրչին տակ: Նմանութիւնն իսկ իրեն անծանօթ բառեր պիտի գտնել տայ. տղան գիտէ թէ փողոցը ցեխոս է երբ ցեխ կայ, թէ երկիր մ'ուր շատ շեռնեղ կան կը կոչուի շեռնոս. թէ տղայ մը որ դիւրաւ կը վախանայ, կը կոչուի երկչոս եւլն. եւլն: Բառեր սորվելու համար վերծանութիւնը բաւ չէ, վասն զի բառերը թեթեւակի եւ արագ կ'անցնին տղուն մտքին մէջէն: Անգղիերէն սորվող մը մերթ անգղիերէն հատուած մը հայերէնի կը վերածէ: Թարգմանութիւն է այս. մերթ ալ հայերէն հատուած մը անգղիերէնի կը փոխէ, այս ալ Շարադրութիւնն է: Արդ այս երկու միջոցներէն ո՞րն աւելի ձեռնտու եւ նպաստաւոր է բառ սորվելու — յայտնի է թէ Շարադրութիւնը: Եւ ինչո՞ւ. վասն զի աչակերտը կը հարկադրի ճիգ մը ընելու եւ Քերականութեան պահանջած տեղն ու ձեւը տալու բառերուն: Նոյնն է նաեւ բառ սորվելու համար. ուրիշներուն գրածը կարդալ՝ քարգմանութիւն ընել է, ինքն իսկ գրելը՝ Շարադրել է եւ նոյն համեմատութեամբ կ'օգտուի միտքը:

5. Շարադրութիւն. Այս գրքոյկին մէջ աչակերտը շարադրութեան վարժուելով հանդերձ, պիտի ստանայ գործնական հմտութիւն ֆերականութեան եւ բառերու, ինչպէս եւ տարրական ու ընդհանուր կրթութիւն մը: Ըստ այսմ ընտրած ենք նիւթերը (*) — մանկական կեանքէն ու բարոյականէն քաղուած ամենապարզ մանրավէպներ (միշտ հոգ տանելով որ դաստիարակութեան նպաստաւոր ըլլան) — զուարճալի առակներ, մերթ սիրուն խօսք մը, սրամիտ

(*) Դասատուն կրնայ ուրիշ նիւթեր ալ ընտրել:

բառ մը, որոնք աչակերտին նրբամտութեան պիտի նպաստեն եւ երեւակայութիւնը վառ պիտի պահեն: Տղան արդար հպարտութիւն մը կը զգայ երբ կը հասկնայ թէ ինչո՞ւ այս ինչ բառը ծիծաղելի է, եւ՝ հակնալու հաճոյքով՝ չի զգար կրած նեղութիւնն ու յոգնութիւնը:

6. Նկատելով որ գրքոյկս դեռատի տղոց համար է, ընդ երկտր վարանման մէջ էինք, թէ ինչպէս ներկայացնելու է ընդլայնելի ծրագիրը: Եթէ շատ համառօտ ընէինք, աչակերտը պիտի հարկադրուէր, շարադրած միջոցին, միտքը չափէն աւելի յոգնեցնել — բան մը որ իր կարողութենէն վեր է: Իսկ եթէ ընդարձակ ծրագիր կամ նախագիծ մը տայինք, նոյն համեմատութեամբ աչակերտը զոյգն ջանք մը միայն պիտի ընէր, եւ աշխատութիւնը զիւրանալով՝ օգտակար ըլլալէ պիտի դադրէր: Ուստի այնպէս ըրինք, ինչպէս կ'ընեն նոր ոտք ելող տղու մը, նախ՝ երկու ձեռքէն բռնելով՝ կը խրախուսեն անոր առաջին քայլերը, յետոյ թող կուտան որ քալէ, բայց ոչ թէ մէկէն ի մէկ եւ բողբոջին միայնակ, այլ հետզհետէ թող տալով ձեռքերը եւ միշտ բռնելու պատրաստ գտնուելով, որպէս զի չիյնայ. վերջապէս օր մ'ալ կը թողուն որ ինքնին՝ միս մինակ քալէ: Ի սկզբան, դասատուն ծանր ծանր կը կարդայ սրբագրուած գրութիւնը (զոր կը գտնէ Բանաչիին մէջ կամ ինք կը շարադրէ դասարան մտնելէ առաջ), յետոյ աչակերտը կը քաճին չափ նոյնը կը կրկնէ: Հոս համառօտ ուրուագիծ մը միայն կայ որ պիտի օգնէ աչակերտին յիշողութեան: Շատ օգտակար է սրբագրուած պարտականութիւնը նորէն կարդալ յաջորդ դասին:

Յետոյ, երբ աչակերտներն այս առաջին քայլն ըրած են, երկրորդ շրջանին մէջ, դասատուն ծրագիրը միայն կը կարդայ, բայց դարձեալ չպիտի լքանէ աչակերտներն. իր կողմէ բացատրութիւններ տալով, մանաւանդ հարցում-

ներ ընելով պիտի օգնէ : Ընդլայնումն ա՛յն ատեն միայն լաւ է , երբ աշակերտն ինքնին գտած է կամ գտնել կը կարծէ : Սրբագրուած գրութիւնը նորէն կարդալու է : Վերջապէս դասատուն ո՛ր եւ է նիւթի ծրագիրը պիտի առաջարկէ , նոյն իսկ առանց կարդալու եւ աշակերտն անձնական ջանքովը պիտի ընդլայնէ զայն (*) : Այժմէն իսկ խորհելու ենք թէ օր մը տղան պիտի հարկադրուի բան մը խմբագրել , առաջարկուած նիւթի մը վրայ , առանց համառօտ ծրագիրն իսկ աչքի առջեւ ունենալու :

Թէպէտ նիւթերն ա՛յնպիսի կարգով մը դասաւորեցինք որ աստիճանաբար դիւրինէն դժուարն անցնուի , սակայն բացարձակապէս անհրաժեշտ չէ այս կարգին հետեւիլ : Ինչպէս մայր մը քալելու կը վարժեցընէ տղան , դասատուն ալ լաւագոյն դասաւորն է աշակերտին կարողութեան աստիճանին եւ կրնայ իր փորձառութեան եւ աշակերտին կարողութեան համեմատ վարուիլ եւ լաւագոյն թուած կարգով ընտրել նիւթերը : Մենք իր օժանդակն ենք մանաւանդ՝ քան առաջնորդը :

(*) Հոգ տանելու է որ աշակերտը ճշդիւ գործադրէ կետադրութեան կանոնները :



ԵՂԱՆԱԿ ՈՒՍՈՒՅՄԱՆ

ԴԱՍԱՏՈՒԻՆ



Բերանացի նախապատրաստութիւն պարսկականութեանց (Devoir). — Նիւթ մը տրուած ժամանակ պէտք է շատ մը հարցումներով զգացընէք աշակերտին թէ ո՛ր կէտի վրայ ծանրանալու է : Պէտք է գտնել տաք այն ամէն գաղափարները որոնք այդ հիմնական կէտին պարագաները կը կազմեն : Նաեւ խօսելու գրգռեցիք զանոնք՝ նոյն իսկ եթէ սխալին կամ նիւթէն շեղին : Բան մ'արտադրելու համար աշակերտն եռանդով ընդգրկելու է նիւթը , եւ ասոր մէջ քաջալերել դասատուին գործն է :

Այս բերանացի եւ հաւաքական նախապատրաստութեանէ ետքը , գոնէ սկիզբները , պէտք է ընդլայնուած նիւթը կարդալ Բանալիէն : Հետզհետէ հարցումները նուազեցընելու է եւ վերջը վերջը ընդլայնումներն այլեւս կարդալու չէ , երբ աշակերտը բաւական առաջդիմելով ա՛լ պէտք չունի նախապատրաստական վարժութեանց :

Պարսկականութեանց երկարութիւնը՝ Նիւթերէն շատերը տասնէն տասնըհինգ տողով կրնան շարադրուիլ : Աշակերտը պէտք չէ վարժի զբարանութեան : Ուղիղ եւ բանաւոր գաղափարներ պարունակող տասը տող գրութիւն նախամեծար է քան քսան տող շատախօսութիւն :

Սրբագրութիւն : Սրբագրութեան նպատակն է վեր հանել ինչ որ լաւ գրուած է պարտականութեան մէջ , նոյնպէս քննադատել ինչ որ սխալ , անստոյգ ու ագեղ է : Մերթ ընդ մերթ Բանալիէն տուն տալով՝ գրել տալու է շարադրութիւնները որպէս զի աշակերտները կարգան ու

ներ ընելով պիտի օգնէ : Ընդլայնումն ա՛յն ատեն միայն լաւ է , երբ աշակերտն ինքնին գտած է կամ գտնել կը կարծէ : Սրբագրուած գրութիւնը նորէն կարդալու է : Վերջապէս դասատուն ո՛ր եւ է նիւթի ծրագիրը պիտի առաջարկէ , նոյն իսկ առանց կարդալու եւ աշակերտն անձնական ջանքովը պիտի ընդլայնէ զայն (*) : Այժմէն իսկ խորհելու ենք թէ օր մը տղան պիտի հարկադրուի բան մը խմբագրել , առաջարկուած նիւթի մը վրայ , առանց համառօտ ծրագիրն իսկ աչքի առջեւ ունենալու :

Թէպէտ նիւթերն ա՛յնպիսի կարգով մը դասաւորեցինք որ աստիճանաբար դիւրինէն դժուարն անցնուի , սակայն բացարձակապէս անհրաժեշտ չէ այս կարգին հետեւիլ : Ինչպէս մայր մը քալելու կը վարժեցընէ տղան , դասատուն ալ լաւագոյն դատաւորն է աշակերտին կարողութեան աստիճանին եւ կրնայ իր փորձառութեան եւ աշակերտին կարողութեան համեմատ վարուիլ եւ լաւագոյն թուած կարգով ընտրել նիւթերը : Մենք իր օժանդակն ենք մանաւանդ՝ քան առաջնորդը :

(*) Հոգ տանելու է որ աշակերտը ճշդիւ գործադրէ կետադրութեան կանոնները :



Ե Ղ Ա Ն Ա Կ Ո Ւ Ս Ո Ւ Յ Մ Ա Ն

Դ Ա Ս Ս Տ Ո Ւ Ի Ն



Բերանացի նախապատրաստութիւն պարսկականութեանց (Devoir). — Նիւթ մը տրուած ժամանակ պէտք է շատ մը հարցումներով զգացընէք աշակերտին թէ ո՛ր կէտի վրայ ծանրանալու է : Պէտք է գտնել տաք այն ամէն գաղափարները որոնք այդ հիմնական կէտին պարագաները կը կազմեն : Նաեւ խօսելու գրգռեցե՛ք զանոնք՝ նոյն իսկ եթէ սխալին կամ նիւթէն շեղին : Բան մ՛արտադրելու համար աշակերտն եռանդով ընդգրկելու է նիւթը , եւ ասոր մէջ քաջալերել դասատուին գործն է :

Այս բերանացի եւ հաւաքական նախապատրաստութեանէ ետքը , գո՛նէ սկիզբները , պէտք է ընդլայնուած նիւթը կարդալ Բանալիէն , Հետզհետէ հարցումները նուազեցընելու է եւ վերջը վերջը ընդլայնումներն այլեւս կարդալու չէ , երբ աշակերտը բաւական առաջգիմնելով ա՛լ պէտք չունի նախապատրաստական վարժութեանց :

Պարսկականութեանց երկարութիւնը՝ նիւթերէն շատերը տասնէն տասնըհինգ տողով կրնան շարադրուիլ : Աշակերտը պէտք չէ վարժի զրաբանութեան : Ուղիղ եւ բանաւոր գաղափարներ պարունակող տասը տող գրութիւն նախամեծար է քան քսան տող շատախօսութիւն :

Սրբագրութիւն : Սրբագրութեան նպատակն է վեր հանել ինչ որ լաւ գրուած է պարտականութեան մէջ , նոյնպէս քննադատել՝ ինչ որ սխալ , անստոյգ ու ազեղ է : Մերթ ընդ մերթ Բանալիէն տուն տալով՝ գրել տալու է շարադրութիւնները որպէս զի աշակերտները կարգան ու

պահեն իբրև օրինակ (*): Այս վարժութիւնը կատարուած օրն ուրիշ ուղղագրութեան դաս ընելու չէ:

Բառագիտական վարժութիւն: Գրքուկիս մէջ զրուած են շատ մը հրահանգներ (**): Պէտք է, այդ հրահանգները գրել տալէ վերջը, քանիցս կրկնել տալ ինչեւ որ լաւ մը սորվին բառերը՝ հանդերձ նշանակութեամբ: Պէտք եղած ատեն գործածելով այդ բառերը, աւելի դիւրաւ եւ ճշդիւ պիտի բացատրեն իրենց միտքը:

Վախելաբանական հրահանգներ: Այս հրահանգներն ալ նախ բերանացի կատարելու է դասարանին մէջ եւ ապա գրաւորը պահանջելու է: Ասոնց շնորհիւ, աշակերտն աստիճանաբար պիտի վարժուի բառերը միացընելով՝ նախադասութիւններ կազմել, նախադասութիւններով պարբերութիւններ եւ պարբերութիւններով ամբողջ հատուածներ կազմել: Եարադրութիւն մը ուրիշ բան չէ, բայց եթէ շատ մը հատուածներ որոնք որոշեալ նիւթ մը կը կազմեն:

(*) Եթէ աշակերտին գրութիւնը լաւ շարադրուած է, կրնաք նորոնութեամբ թողուլ եւ այլևս գրել չտալ Բանալիին մէջ գտնուող ընդլայնութիւնները:

(**) Ուրիշ յաւելում մ'ալ զոր հարկ դատած ենք ներմուծել այս գրութեան մէջ, է ամանցմանց մասը՝ որ յոյժ օգտաւէտ եւ պիտանի է մանաւանդ այս ընթացքին համար, եթէ նոյն իսկ տղաք զայն ուսած ալ ըլլան կանխու: Բարդութեանց վրայ եւս կարելի է վարժութիւններ ընել տալ սա ձեւով:

Պատաստուն. Գտէ՛ք արտ արմատով կազմուող բառեր:

Աշակերտը. Խոհարար, ժաղարար, կամարար եւլն:

Պատաստուն. Գտէ՛ք կից արմատով կազմուող բառեր:

Աշակերտը. Հոգեկից, սրտակից, ընկերակից եւլն:

Կամ, մի և նոյն արմատէն ծագող բառերուն խումբը կազմել տալ: Բառը ըսելով՝ սահմանը կը պահանջէք, եւ կամ սահմանը տալով՝ բառը գտնել կուտաք, այնպէս որ ամբողջ այդ բառերն իբարու հետ իմաստի առընչութիւն ունենան:

Եարադրութեան կարեւորութիւնը: Միայն քերականական կանոններ եւ ուղղագրութիւն գիտնալը լեզուն գիտնալ չի նշանակեր: (Վասն զի Քերականութիւնը կը սորվեցընէ գրել ուղիղ եւ խօսիլ ուղիղ եւ ո՛չ թէ գրել եւ խօսիլ):

— Լեզու մը գիտնալ նոյն լեզուն խօսիլ եւ գրելն է:

— Խօսիլ եւ գրել միեւնոյնն է = գաղափարներ արտայայտել:

— Գրած ժամանակնիս պէտք է ըսենք ճշդիւ ինչ որ կը խորհինք, կամ ինչ որ ըսել կ'ուզենք, եւ ո՛չ աւելի:

— Խօսք մը որ ուզուածէն տարբեր իմաստ մ'ունի, կրնայ տհաճութիւն պատճառել մեր դիմացինին, գործ մը անյաջողութեան մատնել, շատ տեսակ անպատեհութիւններ, սխալներ ու կորուստներ առթել, եւայլն:

— Վերջապէս, մարդ մը շատ անգամ իր գրութեանէն կը դատուի:

— Գրել գիտնալէ աւելի կարեւոր բան չկայ:



ԳՈՐԾՆԱԿԱՆ ԸՆԹԱՅՔ
ՇԱՐԱԴՐՈՒԹԵԱՆ

ԵՒ
ՎԱՅԵԼԶԱԲԱՆՈՒԹԵԱՆ

ՍՄԱՍ ԴԱԻԹԵԱՆԻ

Բնական գերնջիւր ոճ, Եանեկան նիւթեր, ասիւնա-
նական բաշխոււմ, մախուր եւ դիւրմբունցի շեգու, մաս-
նաւոր առաւելութիւններն են այս դասագրքին:

Իսկ պարունակութիւնն է բազմակողմանի, 1⁰ Շա-
րադուրեան եւ նամակագրութեան հիմնական կանոններ,
2⁰ Ընդլայնելի նիւթերու նախագիծեր, 3⁰ Վայելաբա-
նական, Եարադասական, յեզուագիտական գիւշեր, հար-
ցեր եւ վաճառքիւններ, 4⁰ Տեսարաններու եւ պակեր-
ներու վրայ Եարադրելու օրինակներ եւ նկարագրութիւն-
ներ, 5⁰ Նախադասութեանց եւ բառերու վրայ հրա-
հանգներ եւ որ ի կարգին:

Դասասուններու եւ առանձին ուսանողներու համար
յօրինուած է նաեւ ԲԱՆԱԼԻ ՇԱՐԱԴՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՎԱՅԵԼ-
ԶԱԲԱՆՈՒԹԵԱՆ Ս. ԴԱԻԹԵԱՆԻ:

Կեդրոնասեղին է թիւ 8, 9 Գազախէր խան, Պահչէ
Գարու: Կը գտնուի նաեւ բոլոր գրավանառներու հոյ:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԸՆԹԱՅՔ
ՇԱՐԱԴՐՈՒԹԵԱՆ

Ա. ՇՐՋԱՆ

ԽՕՍԲ ԵՒ ՆԱԽԱԳԱՍՈՒԹԻՒՆ

1. Մեր գաղափարները բառերով կ'արտայայ-
տենք:
Երբ ըսեմ տուն, միաքս կուգայ տեղ մը ուր կը բնա-
կինք: Երբ ըսեմ անտառ, միաքս կուգայ տեղ մը ուր
չատ ծառ կայ:
2. Երբ բառերն այն կարգով շարենք որ ամբողջ
իմաստ տան, այն ատեն խօսք կազմած կ'ըլլանք:
3. Բառերը պատշաճ եղանակով շարել և խօսք
կազմելը կը կոչուի շարադրել:
4. Նախադասութիւնը մտածման մը արտայայ-
տութիւնն է:
5. Նախադասութեան էական մասերն են. Տէր
բայի կամ Ենթակայ, Էական բայ, Ստորոգելի:
ՕՐԻՆԱԿ. — Աշակերտն (ենթակայ) ուշադիր (ստորո-
գելի) է (էական բայ):
6. Նախադասութիւնը կրնայ ունենալ նաեւ
Լրացուցիչներ կամ Խնդիրներ:
7. Լրացուցիչ կը կոչուին այն բառերը որ ու-
րիշ բառի մը իմաստը կ'ամբողջացընեն:
8. Երբ նախադասութեան բայը ածական բայ
է և ոչ էական, այն ատեն իր մէջ կը պարունակէ
ստորոգելին:
ՕՐԻՆԱԿ. — Դասասուն կը կրթի իր աշակերտները:
Դասատուն (ենթ.) կը կրթէ՝ այսինքն կրթող (ստորո-
գելի), է (բայ) իր աշակերտները (լրացուցիչ):

1004
1001



9. Բայ մը կրնայ ունենալ շատ Տէր բայիներ (բաղադրեալ Տէր բայի),

ՕՐԻՆԱԿ. — Հայրն ու մայրը կ'աշխատին :

ԳԻՏԵԼԻՔ. — Շատ անգամ գերանուն Տէր բային զօրութեամբ կամ լռելեայն կ'իմացուի :

ՕՐԻՆԱԿ. — Կը կարդաս (այսինքն դուն կը կարդաս) :

1. ՀՐԱՀԱՆԳ. — Որոշեցէք նախադասութեանց մասերը (Տէր բայի, բայ, usnroqելի եւ լրացուցիչ) :

Ո՞վ չի սիրեր իր ծնողքը : — Գրիչով գիր կը գրեն : — Եկեղեցին Աստուծոյ տաճարն է : — Հրէաները չարչարեցին Յիսուսը : — Տղաք դպրոցէն տուն գացին : — Պատուհանները բաց մնացեր են : — Գառնուկը կը մայէ եւ իր մայրը կը փնտռէ : — Ես ծո՞յլ եմ : — Բարիք ըրէ մերձաւորիդ :

2. ՀՐԱՀԱՆԳ. — Գիծերուն տեղ Տէր բայիներ դրէք :

1. — ու — վայրի կենդանիներ են :
2. — ու — թանկագին քարեր են :
3. — ու — մեր առաջին բարեկամներն են :
4. — ու — օգտակար են բոյսերուն :
5. — ու — ընտանի կենդանիներ են :
6. —, —, —, — տարիին չորս եղանակներն են :
7. —, —, — ձուկ են :
8. —, —, —, — Փոքր Ասիոյ նշանաւոր քաղաքներն են :
9. — ու — կը հսկեն հօտերուն վրայ :
10. —, —, —, — ծաղիկներ են :
11. —, —, —, — մարդու հինգ զգայարաններն են :
12. — ու — հաւասար են օրէնքի առջեւ :
13. — ու — կը փայլին գիշեր ատեն երկնքի վրայ :

3. ՀՐԱՀԱՆԳ. — Գրեցէք հինգ նախադասութիւն՝ բաղադրեալ Տէր բայով :

10. Տէր բային կամ ենթական կրնայ ունենալ շատ Usnroqելիներ (բաղադրեալ ստորոգելի) :

ՕՐԻՆԱԿ. — Այս աշակերտն հշու եւ աշխատասուէր է :

4. ՀՐԱՀԱՆԳ. — Օրինակեցէք եւ usnroqեցէք usnroqելիներ :

Այս սեղանները բոլորակ ու սեւ են : — Մահն անցաւոր կեանքին վերջն ու յաւիտենականութեան սկիզբն է : — Զքեզ բարեկամս ու ընկերս կոչեցի : — Այս մարդը մեր դպրոցին տեսուչ եւ դաստիարակ կարգուեցաւ : — Աստուած է մեր տէրն ու արարիչը : — Հայերը ծանրալարոյ եւ աշխատասէր են : — Օր մը շատ հարուստ ու երջանիկ պիտի ըլլաս : — Խոհեմ ու հեռատես եղէք :

5. ՀՐԱՀԱՆԳ. — Գիծերուն տեղ usnroqելիներ դրէք :

1. Ամառուան օրերը — եւ — են :
2. Գողղիացիները — եւ — են :
3. Դուն իմ — ու — ես :
4. Այս զմեկինը — չէ :
5. Օղը կրնայ ըլլալ — կամ — :
6. Օր մը — եւ — պիտի ըլլաս :
7. Յովսէփ կարգուեցաւ — Եգիպտոսի :
8. Ազոխը — է, բայց մեղրն — է :
9. Դատաւոր մը պէտք է — եւ — ըլլայ :
10. Գրիչը, թուղթն ու քանակը — են :
11. Յովհաննէսին մագերը — ու — են :

6. ՀՐԱՀԱՆԳ. — Գրեցէք հինգ նախադասութիւն՝ բաղադրեալ usnroqելիով :

11. Տէր բային և ստորագելին կրնան բազմամասն ըլլալ, այսինքն լրացուցիչ ունենալ:

Ա. Բազմամասն ենթակայ — Աշխատասէր տղան կը զարգանայ:

Բ. Բազմամասն ստորագելի — Աս գորգը պարսկական ապրանք է:

ԳԻՏԵԼԻՔ. — Տէր բային և ստորագելին լրացուցիչ կրնան ըլլալ գոյականն (Յասկացոցի) և ածականը (Վերայիր):

Չ. ՀՐԱՀԱՆԳ. — Ստորագծեցէք ենթականերն ու ստորագելիները յետոյ որոշեցէք անոնց ստորագելիները:

Կ. Պոլիս ընդարձակ քաղաք է: — Երկինքն անհամար աստղեր կան: — Հնազանդ որդին իր ծնողքին մխիթարութիւնն է: — Ամենաբարին Աստուած ոչինչէն ստեղծեց տիեզերքը: — Այս փոքրիկ աղան օր մը մեծ մարդ պիտի ըլլայ: — Սոկրատ իր դարուն մեծագոյն մտորն էր: — Լիզուրկոս օրէնսդիրն է Սպարտայի: — Հայրը անկեղծապէս կը սիրէ որդին: — Ըշմարիտ արժանիքով կը տարբերին մարդիկ իրարմէ:

Տ ՀՐԱՀԱՆԳ. — Գիծեռուն տեղ լրացուցիչներ դրէք:

1. — Եկեղեցին — գեղեցիկ է: 2. — Եղբայրս — հիւանդ էր, առողջացաւ: 3. Տնտեսագիտութիւնը — գիտութիւն մ'է: 4. — մայրաքաղաքը՝ Կ. Պոլիս՝ քաղաք մ'է: 5. Լոնտրայի — պարտէզը լի է — տեսակ բոյսերով: 6. Տարին — օր կը պարունակէ: 7. զանգակատունը — բարձր է: 8. Պարտէզին մէջ կը տեսնեմ — ծառեր և — ծաղիկներ:

Թ. ՀՐԱՀԱՆԳ. — Ի՞նչ է երեք նախադասութիւն որոնց ենթական բազմամասն ըլլայ, և երեք նախադասութիւն որոնց ստորագելին բազմամասն ըլլայ:

12. Ենթակայ մը կրնայ ունենալ շատ բայեր: ՕՐԻՆՍԿ. — Արեւը կը շուշաւորե և կը քափքուի աշխարհը:

10. ՀՐԱՀԱՆԳ. — Օրինակեցէք եւ ստորագծեցէք բայերը: Յետոյ ցոյց տուէք թէ ո՞ր ենթակային կը վերաբերին:

Պարկեշտ մարդիկ կը սիրուին և կը յարգուին: — Ուսուցիչը կը կրթէ և կը դաստիարակէ: — Մարդիկ կը ծնին կ'ապրին և կը մեռնին: — Քահանան կը հովուէ, կը խրատէ և կը մխիթարէ իր ծուխերը: — Դաւիթ, որ պզտիկ տղայ մ'է, կը խաղայ, կը խնդայ, կուլայ կը պոռայ և կաթ կ'ուտէ: Տղա՛ք, երբ մեծնաք ու մարդ ըլլաք, պիտի խնամէք և պիտի պատուէք ձեր ծնողքը: — Մաղի՛կ քաղեցէք, փունջ կապեցէք և բերէք ինծի: — Մարդ կը հնարէ, կը չինէ, բայց չի ստեղծեր: — Միշտ բարին խորհեցէք և գործեցէք:

11. ՀՐԱՀԱՆԳ. — Գիծեռուն տեղ դրէք պատշաճ բայը:

1. Արեւը — ամէն առտու և — իրիկու:
2. Մայր մը — և — իր զաւակները:
3. Աղը — ջուրին մէջ և համ — կերակուրին:
4. Աշունը ծառերուն տերեւները — և —:
5. Ամառուան անձրեւը — և — երկիրը:
6. Մենք — և — ծաղիկները:
7. Երկրագործը — և — երկիրը:
8. Մեր ծնողքը — և — որպէս զի մեր պէտքերն —:
9. Հիւանդ —, — և — փայտերը:
10. Լուսցարարուն — և — մեր ճերմկեղէնները:

12. ՀՐԱՀԱՆԳ. — Ի՞նչ է հինգ նախադասութիւն բաղադրեալ բայով:

13. Բայ մը կրնայ ունենալ շատ խնդիրներ կամ յրացուցիչներ (բաղադրեալ ինքեր) :

ՕՐԻՆԱԿ. — Երկաթուղին կը փոխադրէ ճանապարհներն ու վաճառքները : — Հողը ծածկուած է խոտերով , ծառերով , ծաղիկներով ու տեսակ տեսակ բոյսերով :

13. ՀՐԱՀԱՆԳ. — Օրինակեցէք եւ խնդիրներն ստորագծեցէք :

Յակոբ պատեց իր տետրակն ու գիրքը : — Ծառերն ու ծաղիկներն ոտոգեցինք : — Աստուած զրախտէն վաճառեց Ադամն ու Եւան : — Կարապետ կը սիրէ իր ծնողքն ու վարժապետները : — Ձիւնը պատեց դաշտերը , լեռներն ու ձորերը : — Սենեակը զարգարուած է հայելիներով , գորգերով ու պատկերներով : — Նախ աւելցէք սենեակն ու բակը , յետոյ հաւերուն ու բազրուն կեր տուէք :

14. ՀՐԱՀԱՆԳ. — Գիծերուն տեղ սեռի եւ բնութեան խնդիրներ դրէք :

1. Ժամացոյցը ցոյց կուտայ — ու :
2. Փերեզակէն գնեցի — , — ու — :
3. Արեւը կը լուսաւորէ — :
4. Մենք կը խմենք — , — , — , ու — :
5. Տղայ մը պէտք է մեծարէ — ու — :
6. Հողը կը հերկեն — ու — (խնչերո՞վ) :
7. Յիսուս մեռաւ (ո՞ր շնոր , ի՞նչ բանի վրայ) :
8. Մովսէս Իսրայէլացիներուն բերաւ — :
9. Յուզա մասնեց — :
10. Պարտէզ իջէք , բայց չըլլայ որ — եւ — քաղէք :
11. Մենք կը ցանենք արտին մէջ — , — եւ — :
12. Վառելու համար կը գործածենք — եւ — :

15. ՀՐԱՀԱՆԳ. — Բաղադրեալ խնդիր ունեցող բայերով նախադասութիւններ գտէք :

14. Նախադասութեան մը մասերուն քերականական կարգն այս է .

Ա. Ենթակայ եւ իր լրացուցիչները :

Բ. Բայ եւ իր լրացուցիչները :

Գ. Ստորոգելի եւ իր լրացուցիչները :

ԳԻՏԵԼԻՔ. — Ածական բային լրացուցիչները իրմէ վերջը կը դրուին՝ նախ սեռի խնդիրն եւ յետոյ բնութեան խնդիրն՝ իրենց մասերով :

ՕՐԻՆԱԿ. Արեւը կը լուսաւորէ ու կը տաքցընէ աշխարհ՝ իր ճառագայթներով :

15. Նախադասութեան մասերը տարբեր կարգով ալ կը շարուին . շատ անգամ ստորոգելին ինչպէս և խնդիրները բայէն առաջ կ'անցնին :

ՕՐԻՆԱԿ. — Արեւը իր ճառագայթներով կը լուսաւորէ ու կը տաքցընէ աշխարհ :

16. ՀՐԱՀԱՆԳ. — Սա խօսքերը փրականական կարգի վերածեցէք :

Աւազուտ ճամբու մը վրայ կառք մը կը քաշին երկու ձիեր : — Քրիստոսի Ե. դարուն մետրոպեան տառերը հնարեց Ս. Մեսրոպ : — Գրքերս ինչո՞ւ պատուեց եղբայրդ : — Երբ եկեղեցի հասանք , օրհնութիւն կուտար քահանան : — Ծիւղի մը վրայ թառած՝ կ'երգէ սոխակը : — Օսմանեան թագաւորներու առաջինն է Սուլթան Օսման : — Դուն յոռի վարմունքովդ ատելի պիտի ըլլաս : — Եղբայրս տեսա՞ր դուն : — Այս վտանգէն ազատէ՛ զիս :

Ծան. — Ըստ այսմ , դաստուն ուղղել կուտայ երբ զարտուղի նախադասութեանց հանդիպի :

16. Նախադասութիւնները, երբ իրարու հետ իմաստի առնչութիւն ունին, միանալով կը կազմեն պարբերութիւն: Այդ նախադասութիւնները կը կոչուին պարբերութեան անդամները:

ՕՐԻՆԱԿ. — Աստուած ստեղծեց Ազամն ու Եւան | զորոնք զրաւ եղեմական գրախտին մէջ | եւ պատուիրեց | որ զգուշանան ուտելէ բարիին ու չարին գիտութեան ծառին պտուղը, | սակայն օձը խաբեց զանոնք | եւ երբ կերան նոյն պտուղէն | զգացին | որ մերկ են, | ուստի փութացին ծածկել իրենց մերկութիւնը թզենիի տերեւներով:

Ինչպէս կը տեսնուի, այս պարբերութեան մէջ կայ ինը նախադասութիւն՝ ուղղաձիգ գիծերով զատուած:

17. ՀՐԱՀԱՆԳ. — Հետեւեալ պարբերութեանց մէջ քիւեռով կամ ուղղաձիգ գիծերով զատեցէք նախադասութիւնները:

1. — Ով որ միայն իր անձը կը սիրէ, թող չսպասէ որ ուրիշներէն սիրուի: 2. Մուլութիւնը քուն մ'է որուն մէջ մարդ ազէկ երազ չի տեսներ: 3. Այն տղաք որ խելօք են, միշտ կը սիրուին ու կը վարձատրուին. բայց անոնք որ թիթեւ ու անմիտ վարք մ'ունին, առեղի կ'ըլլան ու կը պատժուին: 4. Հաստատապէս կը հաւատամ թէ հոգին անմահ է, թէ Աստուած պիտի վարձատրէ արդարներն ու պիտի պատժէ մեղաւորները: 5. Խնայողութեան արկղն է հաստատութիւն մը որ կ'ընդունի փոքրիկ գումարներ եւ որ կը հառուցանէ զանոնք տոկոսով, երբ անոնց տէրերը պահանջին: 6. Կը բաղձամ որ չուտ մեկնիք ու կանուխ վերադառնաք:

18. ՀՐԱՀԱՆԳ. — Գտէք երեք պարբերութիւն որ իմաստի առնչութիւն ունեցող նախադասութիւններ պարունակեն:

17. Պարբերութեան մը մէջ երկու տեսակ նախադասութիւն կրնայ ըլլալ:

Ա. Գլխաւոր նախադասութիւն:

Բ. Երկրորդական նախադասութիւն:

18. Գլխաւոր նախադասութիւնը պարբերութեան մը կարեւոր մասն է. ա'ն է որ կը բացատրէ գլխաւոր իրողութիւնը:

19. Երկրորդական են այն նախադասութիւնները որ երկրորդական գաղափարներով կամ յարակից պարագաներով կ'ամբողջացընեն գլխաւորին իմաստը:

ՕՐԻՆԱԿ. — Բնաւ չպիտի զղջաս այն բարեգործութեան համար (Գլխաւոր նախադասութիւն) զոր գործած ես (Երկրորդական նախադասութիւն):

19. ՀՐԱՀԱՆԳ. — Որոշեցէք գլխաւոր ու երկրորդական նախադասութիւնները:

1. — Եղբայրս չի կրնար վազել. վասն զի դեռ շատ փոքր է եւ իր ոտքերն անզօր են: 2. — Ոսկին ու արծաթը կը սպասին բայց առաքինութիւնն անսպաս է: — 3. Մարդն ունի երկու ձեռք ու մէկ բերան, որպէս զի աւելի աշխատի ու նուազ խօսի: 4. — Պէտք է ջանանք երջանիկ ընել ուրիշներն երբ կարող ենք: 5. — Աւելի լաւ է ներել՝ քան վրէժ լուծել, վասն զի առաջինն արդիւնք է մարդասիրութեան եւ երկրորդն՝ անգթութեան: 6. — Այս է իմ մարմինս որ ձեզի ու շատերուն համար կը բաշխուի: 7. — Յիշէ՛ այն բարիքները զորոնք ընդունեցար եւ մոռցի՛ր այն բարիքները զորոնք դուն ուրիշներուն ըրիր: 8. — Լաւագոյն է խղիկ յարգաչէն ուր կը խնդան, քան պալատ ոսկեձեղուն ուր կուլան:

20. Պարբերութեան մը մէջ ամէն նախադասութիւն պէտք է դրուի իրեն յարմար տեղը՝ գաղափարներու բնական շարքով:

ՕՐԻՆԱԿ. — Չ'ըսուիր. Կառապանը մտրակեց ձիերը՝ զանոնք վազցընելու համար եւ լծելով կառքին՝ վրան նստաւ:

Պէտք է ըսել. Կառապանը ձիերը կառքին լծելով՝ վրան նստաւ ու զանոնք մտրակեց վազցընելու համար: (Վասն զի մտրակելէ, վազցընելէ ու նստելէ առաջ, լծած պէտք է ըլլայ):

20. ՀՐԱՆՍՆԵՐ. — Առակերթը գաղափարներու բնական կարգի թող վերածէ հետեւեալ պարբերութեանց անդամները:

1. — Քննալից ետք պառկեցաւ, հանուեցաւ ու աղօթեց: 2. — Գողը կախուելով՝ բանտարկուեցաւ, մահուան դատապարտուեցաւ, ձերբակալուեցաւ ու դատուեցաւ: 3. — Դուռը բացին, զարկի եւ ներս մտայ, տունը գացի: 4. — Աստուած կը պահպանէ մեր կեանքը եւ կը շնորհէ: 5. — Կաքաւը ձու ածեց, բոյն շինեց եւ թըխսեց: 6. — Նամակը թղթատունը զրկեց, կնքեց, ծակեց, ստորագրեց ու գրեց: 7. — Մարդս կը մեռնի, կ'ապրի, կը ծնի ու կը տանջուի: 8. — Գետերը կ'ստոգան դաշտերը, կ'երթան ծովը թափելու ու կը բղխին երկրէն: 9. — Յիսուս Քրիստոս մարգարէներէն գուշակուեցաւ, Հրէաստանի մէջ շրջեցաւ, Յուդայէն մատնուեցաւ, քառասուն օր իր աշակերտներուն հետ անցուց, խաչուեցաւ, Ս. Կոյս Մարիամէն ծնաւ, թաղուեցաւ, Աւետարանը քարոզեց, երկինք համբարձաւ, Հայր Աստուծոյ աջ կողմը նստաւ, յարութիւն առաւ ու դատապարտուեցաւ:

21. Երկրորդական նախադասութիւնները գլխաւորին կը կցուին կա'մ յարաբերական դերանունով, կա'մ շաղկապով:

ՕՐԻՆԱԿ. — Օգնենք անոնց որոնք նեղութեան մէջ են. Վեց տարեկան էի, երբ դպրոց մտայ: Դասդ սորվէ՛, քանի որ ժամանակ ունիս:

ԳԻՏԵԼԻՔ. — Ա. Յարաբերական դերանունն է որ բառը՝ այլեւայլ հոլովներով:

Բ. Երկրորդական նախադասութիւնը գլխաւորին կցող շաղկապներն են. այլ, թե, եթե, թե որ, թեպէտ, թեւեւ, ինչպէս, վասն զի, քանզի, քան թե, որովհետեւ, երբ, մինչդեռ, որ, մինչ, եւայլն:

21. ՀՐԱՆՍՆԵՐ. — Կէտերուն ճեղ երկրորդական նախադասութիւններ դրէք:

1. — Յովսէփ ըսաւ մատակարարին. Յիշէ՛ զիս երբ
2. — Յակոբ նահապետ 130 տարեկան էր երբ
3. — Դուրս ելլել չեմ ուզեր վասն զի
4. — Հայրս շատ հիւանդ է, ինչպէս որ
5. — Դասատուս կը վարձատրէ զիս ամէն անգամ որ
6. — Եկէք զիս տեսնելու երբ
7. — Վերարկուդ մի՛ հաներ քանի որ
8. — Շատ գեղեցիկ էր պարտէզը զոր
9. — Կ'ընկերանամ ձեզի եթէ
10. — Աւելի կ'ընտրեմ մեռնիլ քան թէ

22. ՀՐԱՆՍՆԵՐ. — Գիտելիք Բ.ի պարունակած շաղկապները մէյմէկ պարբերութեան մէջ գործածեցէ՛ք:

22. Շաղկապներն այլ եւ այլ իմաստներ կուտան :

- 1. Ժամանակ ցուցնող. — երբ, մինչ, մինչդեռ, մինչեւ որ.
- 2. Պատճառ » — վասն զի, քանի որ, ինչու որ. որովհետեւ, եւայլն.
- 3. Հակադրութիւն » — բայց, սակայն, այլ, իսկ, եւլն.
- 4. Բաղդասուրիւն » — քան թէ, մանաւանդ թէ.
- 5. Եղանակ » — ինչպէս, որպէս.
- 6. Թեւորիւն » — թէ, եթէ, թէ որ, թէպէտ, թէեւ.
- 7. Քանակութիւն » — քան թէ, այնչափ որ, որչափ որ:

ԳԻՏԵԼԻՔ. — Որ, որպէս զի շաղկապներէն ետք եկող բայը Ստորադասական կը գրուի :

ՕՐԻՆԱԿ. — Շուտ ըրէ որ հասնիս. Աշխատիւնք որ ետ չանանի :

23. ՀՐԱՀԱՆԳ. — Ամբողջացուցէք պարբերութիւններն ու ըսէք թէ շաղկապներն ի՞նչ իմաստ կուտան : (Ժամանակի°, պատճառի°, հակադրութեան°) :

- 1. — Կը պատկիմ երբ 2. — Պէտք է լուռ կենաս, քանի որ 3. — Արեւը կը փայլի ցորեկը, իսկ 4. — Ես օրն ի բուն աշխատեցայ, մինչդեռ դուք 5. — Պէտք է երթանք, քանի որ 6. — Զքեզ կը սիրենք, բայց 7. — Գեաղինը թաց է, որովհետեւ 8. — Գործը լմնցուցի, ինչպէս որ 9. — Դասը լաւ գիտէ, միայն թէ 10. — Մի՛ մերժեր, քանի որ 11. — Հետս պիտի գաս, սակայն 12. — Ներկային մէջ աշխատեցէք, որպէս զի 13. — Բարիք գործենք, մինչդեռ 14. — Արմենակ բարի տղայ մ'է, բայց 15. — Մայրը կաթ չի տար, մինչեւ որ

23. Յարաբերականի պաշտօն կը վարեն մէկ քանի մակբայներ, ինչպէս. Ուր, ուսկից կամ ուրկէ, երբ, եւայլն :

ՕՐԻՆԱԿ. Եկեղեցին այն սուրբ յարկն է ուր կը գիմեն հաւատացեալներն աղօթելու համար :

ԳԻՏԵԼԻՔ. — Յաճախ որ շաղկապն իբրեւ յարաբերական կը գործածուի որպէս զի, վասն զի, ուր, յորում, երբ բառերուն տեղ :

ՕՐԻՆԱԿ. — Շուտ գնա որ հասնիս : Այն տեղը որ խաղացինք : Այն օրը որ հանդէս տեղի ունեցաւ : (Փոխանակ ըսելու՝ Շուտ գնա՛ որպէս զի հասնիս : Այն տեղը ուր խաղացինք, եւայլն) :

24. ՀՐԱՀԱՆԳ. — Աւակերտը վերոյիշեալ մակբայներով երկեկու պարբերութիւն շինէ յետագայ օրհնակին պէս :

- 1. Ահա այն երկիրը ուր ծնայ. 2. Պիտի հաւաքուինք հոն ուսկից մեկնած էինք. 3. Ծիծառը կը վերադառնայ մեր երկիրը, երբ գարունը գայ :

25. ՀՐԱՀԱՆԳ. — Հետեւեալ երկուդականներուն կցեցէք գլխաւոր նախադասութիւններ :

- 1. Եթէ կ'ուզես հնձել 2. Քանի որ կիանքն այսչափ կարճ է 3. Քանի որ չես կրնար ուզածդ ընել 4. Երբ կատարենք մեր պարտքը 5. Թէեւ ես ալ հարուստ չեմ 6. . . . քան թէ ուրիշներուն վիշտ պատճառելու . 7. . . . ապա թէ ոչ կը մեռնիս : 8. . . . որոնցմէ կ'ախորժիս : 9. . . . իբր թէ ընաւ չես տեսած : 10. . . . բայց մարմինս տկար է : 11. Թէմիտտողէս՝ տեսնելով որ Եւրիբիազ կը սպառնայ իրեն գաւազանով՝ կ'ըսէ. « . . . բայց մտիկ ըրէ » : 12. . . . երբ դասերնիս աւարտենք :

(Ծան. — Բանալիին մէջ այս Հրահանգի Թիւրը սխալ դրուած են՝ սկսեալ 6 էն. ըստ այնմ հետեւիլ :)

24. Պէտք չէ շփոթել որ շողկապը որ յարաբերականին հետ. 1. Որ շողկապը, համարժէք թէ կամ եթէ շողկապին, կը դրուի գլխաւոր նախադասութեան բայէն ետքը և միշտ անփոփոխ կը մնայ:

ՕՐԻՆԱԿ. — Կ'ուզեմ որ շուտ կատարես այս գործը: Գիտեմ որ պիտի հաւանի առաջարկիդ:

2. Որ յարաբերական գերանունը ուրիշ գերանուն կամ անուն մը (յարաբերիալ) անմիջապէս կը յաջորդէ, իրրեւ ենթակայ կամ լրացուցիչ երկրորդական նախադասութեան մէկ մասին:

ՕՐԻՆԱԿ. — Հացը գոր կուտամ իմ մարմինս է:

ԳԻՏԵԼԻՔ. — Յարաբերականն ուղղական հոլով կը գրուի երբ ենթակայ է, սեռական՝ երբ գոյականի մը յատկացուցիչ է, հայցական՝ երբ սեռի խնդիր է, եւ տրական, քսցառական ու գործիական կը գրուի երբ բնութեան խնդիր է:

26. ՀՐԱ.ՀԱՆԳ. — Որ յարաբերականը այլեւայլ եղովներով գործածէ՝ երկերկու նախադասութեանց մէջ:

Եզակի. — որ, որու կամ որուն, զոր, որմէ, որով: Յոխն. — որոնք, որոնց, զորոնք, որոնցմէ, որոնցմով:

27. ՀՐԱ.ՀԱՆԳ. — Հետեւեալ խօսքերն ամբողջացուցէք:

1. Կ'երեւայ թէ
2. Կը տեսնեմ որ
3. Կը կարծուէր թէ
4. Համարինք թէ
5. Կը խընդրեմ որ
6. Նամակս քեզի տուի որ
7. Հայրս կը փափաքէր որ
8. Կը հաւատամ թէ
9. Գիտեմ որ
10. Թագաւորը կը հրամայէ որ
11. Չեմ կարծեր որ
12. Հարկ անհրաժեշտ է որ
13. Կ'ուզեմ որ
14. Կ'երգնում որ

25. Միշտ կարելի է անջատ նախադասութիւնները, որոնք իմաստի առնչութիւն ունին, իրարու կցել և այսպէս պարբերական ձեւ մը տալ անոնց:

ՕՐԻՆԱԿ. — Այս աշակերտն ուշիմ է. նա ունի լաւ սիրտ. նա աշխատասէր չէ, նա չի ճանչնար ուսման յարգը:

Նոյնը բարդ. — Այս աշակերտն ուշիմ է եւ լաւ սիրտ ունի. բայց աշխատասէր չէ, վասն զի չի ճանչնար ուսման յարգը:

ԳԻՏԵԼԻՔ. — Պարզ նախադասութիւնները համադրելու՝ այսինքն պարբերական ձեւի վերածելու համար պէտք է պատշաճ տեղը դնել միացող բառ մը:

28. ՀՐԱ.ՀԱՆԳ. — Հետեւեալ պարզ նախադասութիւնները պարբերական կամ բաղադրեալ ձեւի վերածեցէք:

1. Դպրոցը կրթական հաստատութիւն մ'է. հոն կը յաճախեն տղաք ուսմունք սորվելու համար. հոն կը յաճախեն տղաք դաստիարակուելու համար. տղաք ապագային բարի մարդ պիտի ըլլան:

2. Կոյն օգտակար կենդանի մ'է, կովը մեզի կուտայ կաթ. կաթէն կը շինուին պանիրն ու կարագը. պանիրն ու կարագը կարեւոր են մեր սնունդին:

3. Հայերն աշխարհիս զանազան կողմերը ցրուած են, հայերն ունին միութեան կապ. այդ կապն է եկեղեցին. եթէ եկեղեցին կործանի, իրենք ալ կը փճանան:

4. Մետրոս հեռադիտակ մը հնարեր էր. Կալիլէոս լսեց այդ բանը, Կալիլէոս չտեսաւ գործիքը, նա շինեց հատ մը իրեն համար. նա այդ գործիքով ըբաւ շատ գիւտեր:

26. Փոխադարձաբար, կարելի է պարբերական ձեւով միացած նախադասութիւններ անջատ ձեւի՝ այսինքն պարզ նախադասութեանց վերածել:

ԳԻՏԵԼԻՔ. — Բարդ խօսքերը պարզելու համար, նախ զատէ՛ նախադասութիւններն, ապա կցող բառերը ջնջէ՛ եւ անոնց տեղը զի՛ր զանց առնուած բառերը:

ՕՐԻՆԱԿ. — Մետաքսը զոր շերամը կը պատրաստէ, փափուկ ու նուրբ թել մ'է որմէ կը շինենք կերպաններ:

Նոյնը պարզ. — Մետաքսը փափուկ ու նուրբ թել մ'է. շերամը կը պատրաստէ զայն (մետաքսը), անկէ (մետաքսէն) կը շինենք կերպաններ:

29. ՀՐԱՀԱՆԳ. — Հետեւեալ հասուածք պարզ նախադասութեանց վերածէ, շարկապներ ջնջելով:

Օր մը Գայնն ու Գառնուկը ջուր կը խմէին առուակի մը եզրը: Գայլը առուակին վերի կողմն էր, իսկ Գառնուկը վարի կողմը: Գայլը կը գանգատի եւ կ'ամբաստանէ Գառնուկին իբր թէ ջուրը կը պղտորէ: Գառնուկը պատասխան կուտայ թէ անկարելի է այդ, քանի որ ինք վարի կողմն է եւ ջուրը վերէն կը հոսի: Բայց Գայլին մտքը գէշ էր, ուստի ուրիշ հնար մը փնտնելով կ'ըսէ. «Տարի մը առաջ զիս բամբասերես»: Գառնուկը կ'ըսէ թէ ինք մէկ ամսուան է եւ զեռ կաթ կուտէ, հետեւաբար կարելի չէ որ բամբասած ըլլայ: Գայլը, երբ զայս կը լսէ, կը զայրանայ եւ Գառնուկին վրայ յարձակելով կը յափշտակէ զայն ու կը տանի անտառն ուր յօշ պատահելով կ'ուտէ:

30. ՀՐԱՀԱՆԳ. — Գասասուն ուրիշ հասուածներ քող առաջարկէ աւակերթներուն՝ պարզ ու անջատ ձեւի վերածելու համար:

27. Շատ անգամ երկրորդական գաղափար մը գլխաւոր նախադասութեան կցելու համար, փոխանակ յարաբերականի կամ շղկապի, դելբայ մը կը դրուի:

ՕՐԻՆԱԿ. — Սեղան նստայ կերակուր ուտելու համար: Փոխանակ ըսելու, Սեղան նստայ, որպէս զի կերակուր ուտել:

ԳԻՏԵԼԻՔ. — Երկրորդական գաղափարը գլխաւոր նախադասութեան հետ դերբայով կապուած ատեն, այլ եւս շղկապ դնել աւելորդ է: Չըսուիք

Սեղան նստայ, որպէս զի կերակուր ուտելու համար:

31. ՀՐԱՀԱՆԳ. — Դերբայով բացատրուած երկրորդական գաղափարը շարկապով կցեցէ՛ գլխաւոր նախադասութեան:

1. Նամակս ձեզի տուի թղթատուն սանելու համար:
2. Հրանտ տկարութիւն մը զգալով՝ հրաման առաւ տուն երբայու:
3. Ուշադրութեամբ մտիկ ընելու է, վարժապետը դաս տուած ասէն:
4. Ճամբորդը կողք նստաւ մեկնելու համար:
5. Սնտուկը շատ մեծ ըլլալով չի սեղմեցաւ կողքին մէջ:
6. Պէտք է ուտես ապրելու համար եւ ոչ թէ սպրիս ուտելու համար:
7. Տուն զայցած ասէննիդ, փողոցներն անկարգութիւն չընէք:
8. Բան մը գրած ժամանակիդ հոգ տար կէտադրութեան:

32. ՀՐԱՀԱՆԳ. — Շարկապներ ջնջեցէ՛ եւ երկրորդականները դերբայով միացուցէ՛:

1. Ուղեւորութիւնս յետաձգեցի վասն զի սաստիկ փոթորիկ կար:
2. Կ'երթամ որպէս զի կանչեմ:
3. Շուտ քայլէ որ կանուխ հասնիս:
4. Քանի որ այսպէս կը հրամայես, կը կատարեմ:
5. Կ'աղաչեմ որ ներէք:
6. Ամէն մարդ գիտէ թէ օրը 24 ժամ է:
7. Կ'ուզե՞ս որ զքեզ սիրեմ:
8. Թռչունը բոյն կը շինէ որպէս զի պատասպարէ իր ձագերը:

28. Պարբերութիւն մը շարադրած ժամանակ-
նիդ , կրնաք ի հարկին դնել վերադիր մը (ածա-
կան կամ մակբայ) , խօսքին աւելի ճոխութիւն և
ազգուութիւն տալու համար :

ՕՐԻՆԱԿ . — Միթէ չե՞ս զգար սարսուռ մը՝ տեսնելով
ձկնորսին նաւակը որ կը ծփայ ծովուն մէջտեղ :

Այս խօսքն աւելի ազդու կ'ըլլայ , երբ ըսենք .

Միթէ չե՞ս զգար սարսուռ մը՝ տեսնելով ձկնորսին
փոփոխիկ նաւակը որ կը ծփայ անեզր ծովուն մէջտեղ :

Երկու բառ միայն աւելցուցինք . փոփոխիկ և անեզր ,
որոնք կարծես հակադրութիւն մը կը կազմեն և մեր եր-
կուղը կը սաստկացընեն , (զի ուրքան փոքր ըլլայ նաւակը ,
այնքան կ'աւելնայ վտանգը որ կը սպառնայ անեզր ծովը) :

33. ՀՐԱՀԱՆԳ . — Կէտերուն տեղ պատշաճ վերա-
դիրը գրէք :

1. Երբ . . . (ած.) քամին կը չնչէ դուրսը , ի՛նչ լաւ է նստիլ . . . (ած.) սենեակին մէջ ուր կրակը կը ճարճարտէ . . . (մակբ.) :
2. Արթննալուս պէս պատուհանը կը բանամ ու կը ծծեմ առտուան . . . (երկու ած.) օդը :
3. . . . (ած.) երկաթագործը . . . (ած.) կայծեր կը ցայտեցընէ իր . . . (ած.) մուրճին տակէն :
4. . . . (ած.) առուակին խորը կը նշմարուին . . . (ած.) խիճեր :
5. . . . (ած.) մահը աւելի չի մեծարեր արքային . . . (ած.) պալատը , քան . . . (ած.) մշակին . . . (ած.) հիւղակը :
6. . . . (մակբ.) ներում կը խնդրեմ գործած թերուած թեանս համար :
7. . . . (ած.) ծովուն վրայ . . . (մակբ.) կ'առաջանայ . . . (ած.) նաւակն , իր . . . (ած.) առագաստը պարզելով հովին դէմ :
8. . . . (ած.) նաւաստին . . . (մակբ.) կը դիմացրէ փոթորկին , և կ'երգէ . . . (մակբ.) :

34. ՀՐԱՀԱՆԳ . — Յետագայ հասուածէն յապաւե-
ցէք վերադիրներ : Յետոյ բաղդատեցէք երկու գրութիւն-
ներ . : երկուքին մէջ ալ իմաստներ նոյն են , բայց ա-
ռաջինը , որ վերադիրներ ունի , աւելի նոյն եւ ազդու է :

Ե Ր Կ Ո Ւ Հ Ա Ս Կ Ե Ր

Օգոստոս ամսուն , տօթագին առաւօտ մ'էր . հայր մը իր դեռահասակ որդիին հետ դաշտերուն մէջ կը ձեմէր հանդարտիկ : Առաւօտեան ցօղը կը փայլէր ցորեններուն ու տերեւներուն վրայ : Շողշողուն հարսնուկները , իրիկուան ծիրանափայլ ամպերուն նման , հեզիկ կը տատանէին զեփուռին թեթեւ շունչէն , ոսկեգիտակ հասկերուն մէջտեղ : Մանուկը , որ հոս հոն կը վազէր ցնծագին , կեցաւ յանկարծ ու ըսաւ . « Տե՛ս , հայրիկ , սա երկու հասկերը : Մէկը ուղղաբերձ կը կանգնի , միւսը վայրահակ կը խորհի : Ինչո՞ւ երկուքն ալ մի եւ նոյն բարձրութիւնը չունին : »

Հայրը պատասխանեց բարութեամբ :

— Որդեակ՛ի իմ սիրելի , այն հասկը որ գոռոզութեամբ կը տնկէ իր գլուխը , քիչ հատիկներ կը պարունակէ , իր գլուխը դատարկ է , մինչդեռ միւսը լի է ցորենով : Այս պէս է նաեւ մարդոց համար . անոնք որ իրական հրատուութիւն ու արժանիք ունին , խոնարհ ու համեստ կ'ըլլան . իսկ անհանճար ու սնափառ մարդիկ բարձրալուխ կը յօխորտան :

35. ՀՐԱՀԱՆԳ . — Երեւական վերադիր կցեցէք սա անուններուն :

Վարդ , մարգ , քուն , դատաւոր , վազր , ձմեռ , ցաւ , աշակերտ , շուն , պատերազմ , պառլ , կին , ծաղիկ , ծառ , հաց , ձայն , բարեկամ :

36. ՀԲԱՀԱՆԳ. — Կէսերուն տեղ վերադիր դրէք :

1. Յակօր մօտեցաւ ծերունիին եւ... (մակը) բարեւեց զնա : 2. Տեսէք Մարիամը , ի՛նչպէս այդ ... (ած.) աղջիկը ... (մակը.) կը շրջազայի , իր ... (ած.) շրջագոստը հաղած : 3. Հայրի՛կ , կ'ուզէի քեզի նամակ մը գրել . բայց չգիտեմ շարադրել ... (ած.) խօսքեր , ուստի ... (մակը.) կ'ըսեմ թէ (մակը.) կը սիրեմ զքեզ : 4. ... (ած.) գայլը ... (մակը.) յարձակեցաւ ... (ած.) գառնուկին վրայ եւ յօշոտեց զայն : 5. ... (ած.) մայրը ... (մակը.) կուլար՝ տեսնելով իր ... (ած.) զակկին մահը : 6. Փոթորիկ կալ ... (ած.) քամին կը մռնչէ , իրրեւ ... (ած.) առիւծ մը , ... (ած.) ծառերն , ինչպէս եւ ... (ած.) տունկերը կը սարսին ճարճատելով : 7. ... (ած.) ծոփուն վրայ կը տատանէր մեր ... (ած.) նաւակը : 8. Զմեռուան ... (ած.) իրիկուն մ'է . տեսէ՛ք ... (ած.) ծերունին որ կը մտրայ ... (ած.) ձեռքերը կարկառած , մինչ զուք կը վայելէք ... (ած.) սենեակին մէջ , մարմնի հանգիստ եւ ընամարտի գորով : 9. Զին ... (ած.) կենդանի է , իսկ էջը ... (ած.) անասուն է : 10. Երբ զիչերը սփռէ իր ... (ած.) քօղը , ... (ած.) երկաղործը ... (ած.) քունի մէջ կը փնտռէ իր ... (ած.) աշխատութեան մոռացումը : 11. ... (ած.) Աստուած կը պարգեւէ իր ... (ած.) բարիքներն ամէն անոնց որ ... (ած.) սրբտով ու . . (ած.) գործով արժանի կ'ըլլան իր ... (ած.) շնորհքին :

37. ՀԲԱՀԱՆԳ. — Սա վերադիրներն ի՞նչ անուններու կը յարմարին :

Անուշ , համեղ , աղի , ճերմակ , բարի , սև , քառակուսի , փայլուն , գունաւոր , խոշոր , լայն , բարձր , նեղ , երկայն :

29. Խօսք մը երկայն ըլլալով գեղեցիկ և ազդու եղած չըլլալ . ընդհակառակն անխնայ և աւելորդ բառերով խօսքը երկարելէ զգուշանալ պէտք է :

30. Խօսք մը ա՛յն ատեն գեղեցիկ և ազդու կ'ըլլայ , երբ աւելցնենք նոր գաղափարներ ու բառեր որոնք աւելի շահեկան , կենդանի ու կատարեալ կերպով կը ցուցնեն անձերը , առարկաներն ու իրողութիւնները :

ՕՐԻՆԱԿ . 1. — Պարզ եւ հակիրճ խօսք մը .

Ղուկաս , որ բանտարկուած է , կը դիտէ պատուհանէն իր ընկերները որոնք կը խաղան պարտէզին մէջ :

Նոյնն՝ աւելի ճոխ եւ ազդու :

Ղուկաս , որ բանտարկուած է , շխուրթեալք կը դիտէ պատուհանէն իր զուարթ ընկերները որոնք կը խաղան ընդարձակ պարտէզին մէջ :

ՕՐԻՆԱԿ 2. — Պարզ եւ հակիրճ .

Յովհաննէս եկաւ իր հօրը քով եւ անոր ըսաւ . « Հայրի՛կ , կը հաճի՞ս ներել ինձի : »

Նոյնն՝ աւելի ճոխ եւ ազդու :

Յովհաննէս , որ գործած յանցանքին վրայ զղջացած էր , արսասուռաչից աչիով եկաւ իր հօրը քով , անոր վիզը փարեցաւ եւ ըսաւ խղցր ձայնով մը . « Սիրելի՛ հայրիկ , կը հաճի՞ս ներել ինձի եւ զրկել զաւակդ որ կը զղջայ արեանց :

Ծան. — Ինչպէս կը տեսնուի , այս խօսքին արժանիքն երկար ըլլալուն մէջ չէ : Այս երկրորդ բացատրեան մէջ կարծես աչիդ առջեւ կենդանի կերպով կ'երեւայ իրողութիւնը . կը տեսնես անձեան իրենց շարժումներով ու ձեւերով , եւ կը լսես անոնց ձայնը :

38. ՀՐՄ.ՀԱՆԳ. — Սա պարզ խօսքերն ընդլայնեցէք եւ հոխացուցէք պատշաճ բառեր եւ երկրորդական գաղափարներ կցելով :

1. Օննիկ քննութեանց մէջ առաջին ելաւ : 2. Հասկերը կանգուն կը բռնեն իրենց գլուխը : 3. Ձեզմէ ո՞վ չի սիրեր զբօսանք ընել : 4. Զբօսանքը առողջութիւն կը պարգեւէ : 5. Զուրը կը փորէ քարերն անգամ : 6. Մեղանը կը շինուի գխտորով ու ծծմբատով : 7. Վառմ եկաւ մօրը վիզը պլուեցաւ :

ՕՐԻՆՍԿ. — Մեր սիրական դասընկերը Օննիկ, որ ամբողջ տարեշրջանին մէջ յարատեւութեամբ կ'աշխատէր, այս անգամ ամառվերջի ֆենուքեանց մեջ յաշոյակ պատասխաններ տալով՝ առաջին ելաւ եւ մրցանակի արժանացաւ :

39. ՀՐՄ.ՀԱՆԳ. — Սա խօսքերը պարզ եւ հակիրճ ձեւի վերածեցէք երկրորդական գաղափարներն ու վերադիրները ջնջելով :

1. Արբանամ, որ Աստուծոյ հաճելի մարդ մ'էր, հրաման ստացաւ Աստուծմէ՝ իր միամօր ու սիրական որդին Իսահակը ողջակէզ ընել փայտակոյտի վրայ :

2. Հեզ մայրը կողկողագին հուլար տեսնելով իր դեռահաս աղջկան մահը :

3. Տեսէք սա խեղճ ծերուկը, որ կ'ուզէ աշխատիլ որպէս զի անսուղ չմեռնի իր զաւակներն ու կինը : Փողոցները կը մուրայ, իր դողդոջ ձեռքերը կարկառած մինչ դուք հանգիստ կը վայելէք ձեր սաքուկ սենեակին մէջ եւ բանի մը կարօտ չէք :

4. Կաթը՝ որ կը պարունակէ բնապանիր եւ ուրիշ անդարար նիւթեր, շատ օգտակար խմելիք մ'է թէ՛ մանուկներուն եւ թէ՛ չափահասներուն համար որոնք փափուկ կազմ ունին :

5. Երբ գիշերը աշխարհիս վրայ տարածէ սեւ քօղը, ամէն մարդ պէտք կը զգայ հանգիստ քուն վայելելու, որպէս զի կազդուրէ ցորեկուան աշխատութենէն պարտասած մարմինը :

Պատասուներուն. — Նախընթաց վարժութիւններէ զաս, կրնաք յանձնարարել որ աւակերք բերանացի ու գրուոր նկարագրէ որ եւ է դէպք որուն ականատես կրնայ ըլլալ : Գտել կը ցուցնէք ծանօթ էկ մը, առարկայ մը, պատկեր մը՝ եւ նկարագրել կուտաք, հարցումներու միջոցաւ աւակերթին հասկցրնելով անծանօթ կամ մոռցած կէտերը :

Ահաւասիկ օրինակ մը :
Դասաւորն . — Նկարագրեցէք սա Ձե՛ն :

Աշակերտը . — Այս ձին բարձրահասակ, աւելէ ու վառվռուն կենդանի մ'է : Անոր մարմինն ունի բուն, գլուխ, երկար վիզ մը, չնոսնֆ, ազի : Ճակտին վրայ կայ մազի փունջ մը եւ վիզին շուրջը կախուած են բաւեր :

Ենթադրենք թէ տղան այսչափ միայն բաւ : Արդ՝ դասաւորն հարցումներ կը ստեղծէ . — Ի՞նչպէս է գլուխը, Ի՞նչ անցուած է բերանը, Ի՞նչ դրուած է կռնակին վրայ : Ոտքը Ի՞նչպէս է : Ի՞նչ ձայն կը հանէ : Ի՞նչ բաներու կը գործածուի : Ի՞նչ կ'ուտէ, ո՞ւր կ'ապրի : Էջը Ի՞նչ կը կոչուի : Ի՞նչ է մարուկը, եւայլն, եւայլն :

40. ՀՐՄ.ՀԱՆԳ. — Նկարագրեցէք Շուն մը, Ծառ մը, Աղբիւր մը :

41. ՀՐՄ.ՀԱՆԳ. — Երկերկու վերադիր կցեցէք :

1. Գիրք, զմելին, լեզու, դէմք, ջուր, գիշեր, կեանք, հոտ, երկինք, դեղ, բժիշկ : 2. Ուտել, վազել, կարդալ, մեռնիլ, քնանալ, խօսիլ, գործել, յաղթել, երգել :

42. ՀՐՄ.ՀԱՆԳ. — Սա պարզ խօսքերն ընդլայնեցէք :

1. Գիշերն ալ գասերս կը սորվիմ : 2. Կիտրոնը բուրբի պտուղ մ'է : 3. Հօրիգոնին վրայ ծիածանը կը փայլի : 4. Ղուկասիկ խելօք չէր կենար : 5. Ձին զօրաւոր բնազդներ ունի : 6. Հեռուն դաշտին մէջ կ'երեւան . . . : 7. Պատերը ներկել տալու էք . . . :

Բ. ՇՐՋԱՆ

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ

(Հետեւեալ հրահանգները, գրուելէ առաջ, պէտք է բերանացի օտարութիւն դասարանի մէջ: Գասառու նախ ինք կը կարգայ հասուածն, ամբողջացրնելով պակաս մասերը, ապա նոյնը կրնել կուտայ յաջողակներուն: Առանց այս պայմանին, բաղձացուած արդիւնքը ձեռք չի բերուիր:

1. Մեր տունը

Մեր տունը . . . — (Ո՞ր լեռնէն, ո՞ր գոլոցէն մէջ է, է՞նչպէս է, ի՞նչպէ՞ս հարկ է, ի՞նչպէ՞ս սենեակ ունի. ո՞ր սենեակէն մէջ ի՞նչ ճաշէ՞ք, ի՞նչ կարգա՞րէք, ի՞նչ շքե՞ք, եւ այլն: Պարտէ՞ք ունի՞ք, եւ այլն):

2. Մեր ընտանիքը

Մեր ընտանիքը . . . (Ի՞նչպէ՞ս հարկ է ի՞նչ բանիւնայ, ո՞րն է էն, է՞նչ ի՞նչէն հարց, է՞նչ ճաշըք, մէ՞ծ եղբայրք, ո՞րն է է՞նչ ի՞նչէն):

3. Կատուիս նկարագիրը

1. Ի՞մ կատուս . . . (Գո՞յնը, աչքի՞ բոլոր, ունի՞նք զո՞ւր):
2. Կատուս շատակեր է. երբ ես կը ճաշեմ, կուգայ (ո՞ւր) կը պարտի:
3. Ոտքիս կը քսուըտի . . . (է՞նչպէ՞ս):
4. Այն ատեն . . . (է՞նչ շարժումս կ'ընէ, է՞նչ բերք ունի):
5. Կատուս մսկոտ է, (ո՞ւր) կենայ կը սիրէ, (այն ուրն է՞նչ կեցողութիւն ունի, է՞նչպէ՞ս ի՞նչ բանիւն էր լեռնէն):
6. Այդ միջոցին . . . (աչքի՞ բոլոր ի՞նչ պահէ ի՞նչ ֆոն):

1. Ամբողջացուցէ՛ք նախադասութիւնները. — 1. Երկամբ . . . (Երկու բայ) կրակին մէջ: 2. Լուացարարը . . . (Երկու բայ) ճերմակ գեղէնները: 3. Փոքրիկ շշուկ մը լսելուն պէս, նապաստակը . . . (բայ մը) սկսանքն ու . . . (բայ մը): 4. Քահանան . . . (Երկու բայ) եկեղեցիին մէջ:

4. Հրահանգ

Առակներսներն հետեւեալ հարցումներուն պատասխանեն. յետոյ որոշեն գլխաւոր ու միջանկեալ նախադասութիւնները:

2. Ինչո՞ւ համար արտը կը հերկեն:
3. Ինչ կը կոչուի այն մարդը որ իրեն եղած բարիքը չի ճանչնար:
4. Ո՞րն է այն լեռն ուր իջաւ Նոյի տապանը:
5. Տեսա՞ծ էք այն գործիքն որով հրդեհ կը մարեն:
6. Ո՞րն է այն քաղաքն ուր կը գտնուի Քրիստոսի գերեզմանը:
7. Ի՞նչ կ'ընես երբ օդը ցուրտ ըլլայ:
8. Ի՞նչ է այն ճերմակ փոշին զոր կերակուրի վրայ կը ցանեն:

Ծան. — Ինչպէս կը տեսնուի, առակներն անգրգալապէս պարբերութիւններ կը շինեն: Պէտք է սակայն հոգ սանիլ որ պատասխաններն ամբողջ ըլլան եւ գլխաւոր ու երկրորդական նախադասութիւններ պարունակեն:

5. Հրահանգ

Գլխաւոր նախադասութիւնը դրուած է. հարցումներուն պատասխանը գտնելով՝ ամբողջ խօսք կազմեցէ՛ք:

ԳԼԽԱՎՈՐ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆ

Յիսուս խաչուեցաւ

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

- Ե՛րբ
- Ո՞ր
- Որո՞ւ ձեռք
- Ինչո՞ւ

ԳԻՏՆԵԼԻՔ. — Ի հարկին երկրորդական նախադասութիւնը կրնայ դուրի գլխաւորէն առաջ:

2. Ամբողջացուցէ՛ք նախադասութիւնները. — 1. Հայրս որ սի երթալու համար հետը կը տանի . . . (Երեք խնդիր): 2. Զգոյ՛ ճղի . . . (Երեք խնդիր): 3. Քաղաքը շինելու համար . . . (հինգ խնդիր) կը գործածեն: 4. Դերձակուհին կը կարէ մեր . . . (Երկու խնդիր): 5. Մենք կ'ուտենք . . . (հինգ խնդիր):

6. Մեր դպրոցը

1. Մեր դպրոցը . . . (Լալ, փողոց, դէրտ, քաժանսփեր — սրահ, դասարան, քահ, պարտէզ, ճաշարան): 2. Սրահին մէջ կան . . . (խնչ քաներ): 3. Դասարանին մէջ . . . (խնչ կ'ընէ):

7. Դպրոցին մէջ

Մեր դպրոցին մէջ կայ . . . (տան՝ աշակերտ, տան՝ կարգ. դռան ո՞ր կարգէն էս, ի՞նչ դաս կ'առնեն, օրը տան՝ ժամ: — Ասասորսան ժամը տանի՞ն դպրոց կ'երթաս, փնչէ տանի՞ն հոն կը մնաս, եւայլն):

8. Խաչ

1. Գէորգ, աշակերտ ազգային վարժարանի, խաչ մը ստացաւ Տնօրէնէն, (խնչ): (Խնչէս խաչ է, ժողատէ՞ն ինչպէ՞ս է): 2. Դպրոցէն ելլելով՝ փոխանակ (խնչ ընելը), կը վազէ (ո՞ւր), վասն զի կը փափաքի վայրկեան մը առաջ (խնչ ընել):

9. Յիսուսի Ծնունդը

1. Յիսուս ծնաւ . . . (որտե՞, ո՞ւր, ո՞ր տաղտի մէջ, ո՞ր լափաւորին օրով): 2. Մոգերն . . . (խնչ տեսնելով երկէնէլը), եկան (տակէ՞ց, ի՞նչ ընելը — համար) եւ իրենց հետ բերին . . . (խնչ):

(Տե՛ս. էջ 41, Հրահանգ. 5 ի Գիտելիք):

3. Կէսերուն տեղ պատշաճ բառը դրէք. — Հօրս բոյրն իմ . . . է, բրոջս ամուսինն իմ . . . է: 2. Տանձը կը բուսնի . . . ին վրայ, դեղձը կը բուսնի . . . ին վրայ, խաղողը . . . ին վրայ: 3. Մօրուքն ու մագերը կը կրատուին . . . ով: 4. . . . ին մէջ կը պահեն իւզ, պանիր եւ ուրիշ ուտելիքներ: 5. Մեր . . . է այն երկիրն ուր ծնած ենք: 6. Երբ կամը մակրղենք, կ'ըլլայ . . .

10. Հրահանգ

Սա խօսքերն ամբողջացուցէք:

1. Առաւօտուն արթննալով՝ (խնչ կ'ընէ):
2. Երբ անօթի ըլլաս . . . (ճորտ ի՞նչ կ'ընես):
3. Փոքրիկ մանուկը օրօրանին մէջ կուլար. մայրը անոր քով գնաց եւ . . . :
4. Դպրոց գացող տղան . . . (խնչ կ'ընէ):
5. Պէտքերս ու Արչաւիր կը կռուէին, անոնց հայրը (խնչ ըրաւ, ի՞նչ ըսաւ):
6. Օղը ցուրտ է, եթէ վերարկուդ հանես, . . . :
7. Երեկոյին, երբ դպրոցէն արձակուիմ, . . . :
8. Կէս օր է. ոչխարները ծարաւցած են, հովիւը զանոնք . . . :
9. Ձեռքերդ աղտոտեր են, գնա՛ . . . (ո՞ւր, ի՞նչ ընելը — համար):
10. Սալորները հասունցեր են, երթանք . . . :
11. Երբ որդին մեռնի, մայրը . . . :
12. Շապիկդ պատուեր է, պէտք է . . . :
13. Նախ խորհէ եւ ապա . . . :

11. Եկեղեցին

Եկեղեցին շէնք մ'է (Լալ, փողոց, ի՞նչ կայ մեջը, ո՞վ կ'երթայ հոն, ի՞նչ ընելը — համար: Ի՞նչ կ'ընէ տահանան, որպէ՞րն էր, ժամի՞նչ, եւայլն):

4. Կէսերուն տեղ պատշաճ բառը դրէք. — Յաջողութիւն մը զոր չէիր յուսար, կը կոչուի . . . յաջողութիւն: 2. Գործ մը որ վտանգ կը սպառնայ, . . . է, կ'ըսուի: 3. Զօրավար մը որ չի յաղթուիր, . . . է: 4. Մարդ մը որ չի գժար, . . . է: 5. Ան որ զոգուածութիւն չ'ըներ, . . . կ'ըսուի: 6. Եկեղեցի մը որ գմբէթ ունի, կը կոչուի . . . :

12. Դաշտն ու արօր

Դաշտն ընդարձակ տեղ մ'է, հոն կան (է՞նչ բաներ) : Արտին մէջ կ'աշխատի մշակը, (է՞նչ կ'ընէ, որքէ՞ն, որքէ՞ն. — է՞նչ գործիքներով) :

13. Փոքրիկ Աշոտին գլխարկը

1. Չարասիրտ Յակոբ փոքրիկ Աշոտին գլխարկը վեր նետեց, եւ գլխարկը մնաց . . . (որք) :

2. Աշոտ մեծ վիշտ եւ անձկութիւն կը զգար . . . (էնչ) : Ինք չէ՞ր կրնար գլխարկը ծառէն վար առնել . (եւ էնչ) : Երբ տուն երթար առանց գլխարկի, (է՞նչ պիտի ըսէին) :

3. Բայց Լեւոնիկ որ . . . տղայ մ'էր, ծառին վրայ մագլցեցաւ, . . . (է՞նչպէս վեր կ'ելլէ) : Վերջապէս գլխարկին հասաւ, Աշոտին նետեց զայն (է՞նչ ըսելով) :

4. Աշոտ . . . (է՞նչ կ'ընէ, է՞նչ կ'ըսէ Լեւոնիկ) եւ միտքը կը գնէ այլ եւս չխաղալ . . . (որք՞ն հետ) :

14. Մկրտութիւն

1. Նազարէթ քաղաքէն ելլելով Յիսուս գնաց . . . (դեպի որք հետ) :

2. Հոն Զաքարիայի եւ Եղիսաբէթի որդին՝ Յովնանն էս Մկրտիչ . . . (է՞նչ կ'ընէր) :

3. Յովնանն էս . . . (որք) մկրտեց (ըն՞ով, է՞նչպէս) :

4. Երբ Յիսուս ջրէն ելաւ (է՞նչ պատահեցաւ, որք՞ն յայն ըստեցաւ, է՞նչ կ'ըսէր) :

5. Ամբողջացուցէ՛ք նախադասութիւնները. — (ժողկապ մը) մայր բացակայ է, Փոքրիկ Մարիամ տունը կը պահէ : 2. . . . (ժողկապ մը) իմանամ բնութեանց արդիւնքը, հեռագրով կը ծանուցանեմ ձեզ : 3. (ժողկ.) կարգիդ մէջ առաջին ըլլաս, պէտք է որ շատ աշխատես : 4. Երանի՛ հեզերուն (ժողկ.) անոնք պիտի ժառանգեն երկրի արքայաւթիւնը : 5. . . . (ժողկ.) ուզէք, կրնաք զիս փրկել : 6. . . . (ժողկ.) յօժարու՛նք մամբ չես գործեր, բռնի պիտի գործել տան :

15. Հրահանգ

Առակերտները սա հարցումներուն պատասխանեն :

(Տես էջ 41, Հրահանգ 4. ի Ծանօթութիւնը) :

1. Ի՞նչ կ'ընէ շերամը :
2. Ծիծեռնակը ե՞րբ կը վերադառնայ մեր կողմերը :
3. Ո՞րն է այն արհեստաւորն որ գիրք կը կազմէ :
4. Ի՞նչ կը կոչուի այն մարդը որ իր հայրենիքէն հեռու կը գտնուի :
5. Ե՞րբ այգեկութ կ'ընեն :
6. Ի՞նչ կ'ըսուի այն կենդանին որ կռնակին վրայ կուտկէն ունի :
7. Ի՞նչ կ'ընես, երբ հիւանդ ըլլաս :
8. Քանի՞ դահեկանի գնեցիր այն գիրքը զոր կը կարգաս :
9. Ծարթուան ո՞ր օրը սանմանուած է հանգստի :
10. Ի՞նչ կը պատահի ծովուն վրայ, երբ փոթորիկ ըլլայ :
11. Ի՞նչ կը տեսնես երբ առաւօտուն արթննալով պատուհանը բանաս :
12. Մարդիկ ե՞րբ բժիշկի կը դիմեն :
13. Քանանան ի՞նչ կ'ընէ երբ մարդ մեռնի :

16. Մեր պարտքը

Մեր պարտէզը . . . (որքէ՛ք գործաւթեան ունէ, է՞նչ կայ ձեզ. — ծառեր, բանջարեղէններ, ծաղկանոց : — Ե՞րբ կ'առգէ՛ք յեր պարտէզը) :

6. Ամբողջացուցէ՛ք սա խօսքերը. — Պօղոս ծաղիկ կը բաղէ . . . (ն'ըր, ինչո՞ւ) : Որմնադիրը շաղախ կը պատրաստէ . . . (ինչո՞վ, ինչո՞ւ) : 3. Որսորդն . . . (ի՞նչ առած ուսին վրայ) կ'անցնի դաշտերէն . . . (որո՞ւ հետ) : 4. Կայծողիկը . . . (ե՞րբ) կը փայլի . . . (ն'ըր) : 5. . . . (ե՞րբ) փարոսները կը վառուին . . . (ն'ըր, ինչո՞ւ) : 6. Մանգաղով կը հնձէ . . . (ն'վ, ի՞նչը, ո՞ւր, ե՞րբ, ինչո՞ւ) :

17. Գուկայ

Գուկային մէջ կը տեսնեմ . . . (Է՛նչ էս ո՞վ — Է՛նչ կ'ընեն, Է՛նչ արհեստարարներ կան, Է՛նչ կը վաճառեն :

Կերպասը կը չափեն . . . (Է՛նչ՞ վ) : Միտը կը կշռեն . . . (Է՛նչ՞ վ) : Հատով կը ծախեն . . . (Է՛նչ քաներ) : Այս ամէնը գնելու համար . . . (Է՛նչ պէտք է) :

18. Նուարդ սեղան կը պատրաստէ

1. Փոքրիկ Նուարդ սեղան կը պատրաստէ . խնամով կը փռէ ծածկոցը բոլորակ սեղանին վրայ, այնպէս որ . . . :

2. Սեղանին մէջտեղը պարապ կը թողու . . . (Է՛նչ՞ ո) :

3. Կը սկսի շարել պնակները, բայց զետեղելէ առաջ կը նայի թէ . . . :

4. Ամէն մէկ պնակի քով . . . (Է՛նչ է՞ր) կը դնէ :

5. Պնակներուն առջեւ կը շարէ գաւաթները, կանխաւ . . . (Է՛նչ ընելով) :

6. Յետոյ կ'երթայ . . . (Է՛նչ է՞րը) կը բերէ :

7. Այն ատեն կը կանչէ մայրն ու կ'ըսէ. «Մայրի՛կ, եկո՛ւր տես թէ . . . » :

19. Հրահանգ

Սա խօսքերն ամբողջացուցէք .

1. Գիտեմ որ . . . :
2. Կը խոստովանիմ թէ . . . բայց . . . :
3. Մեր զպրօքը որ . . . , երէկ բացուեցաւ :

Գ. Կէտեան սեղ պատշաճ բառը դրէք. — 1. Գիրքերս շարեցի . . . իս մէջ : 2. Սեղանի սպասները . . . ին մէջ կը պահենք : 3. Ճամբորդներն իրենց պիտոյքը . . . ին մէջ գետեղեցին : 4. Հայրս իր դրամը կը պահէ . . . ին մէջ : 5. Գինին կը լեցընեն . . . ին մէջ : 6. Հացը կ'եփենք . . . ին մէջ : 7. Նորածին մանուկը կը մկրտուի . . . ին մէջ :

4. Օրէնքը կը պահանջէ որ . . . :
5. Հայրս որ . . . , բժշկուեցաւ :
6. Կ'երեւայ թէ . . . :
7. Կրնայի քեզի ներել, եթէ . . . :
8. Հա՛րկ է յիշեցնել թէ . . . :
9. Հաւատա՛ որ . . . :
10. Աստուած Մովսէսի ձեռք . . . (Է՛նչ ըրաւ, ուսէ՛ց) :
11. Մարմինը կը մեռնի, բայց հոգին . . . :
12. Մինչեւ տղան չի լայ . . . (Տայրը Է՛նչ չ'ընէր) :
13. Զանգակն հնչելուն պէս . . . :

50. Մարդու մարմինը

Մարդու մարմինը կը բաղկանայ երեք մասերէ, ուրոնք են . . . :

Հինգ զգայարանքներն են . . . :

(Ի՛նչ կ'ընենք այսօվ, յետո՞վ, եւայլն : Գրէ՛ հինգ մարտն ուսուաները) :

21. Հացագործը

Հացագործը հաց կ'եփէ . . . (Է՛նչ՞ վ, Է՛նչպէս, ո՞ր կը լինէ, ո՞ր կ'եփէ) :

22. Ժամացոյցը

1. Արշաւիր մօրմէն ստացաւ ժամացոյց մը : Մայրը պատուիրած էր . . . :

2. Արշաւիր որ . . . (Է՛նչ լեբրո-լեխներ կը ղեկն ղեկը ժամացոյցը քանալու), ժամացոյցը կը բանայ . . . (Ե՛րբ), եւ մէջը կը տեսնէ (Է՛նչ) :

Տ. Ամբողջացուցէք նախադասութիւնները. — Պարտիզպանը արեւէն կը պահպանէ իր ծաղիկները որպէս զի . . . : 2. Կղզաքներն իւրով կ'օժեն որպէս զի . . . : 3. Փոծորիկի ժամանակ ծառին տակ՞մի՛ ապաստանիր, որպէս զի . . . : 4. Առաւօտուն սենեակիս պատուհանները կը բանամ որպէս զի . . . : 5. Պիտի վարձատրեմ զքեզ քանի որ . . . : 6. Մարդիկ տուն կը շինեն, որպէս զի . . . :

3. Այն ատեն հաճոյք կը զգայ անոր դպչելու . . . (Ինչով) : Ժամացոյցը կը կենայ : (Արշաւեր Ինչպէս կը բխանայ իւր ժամացոյցը կեցեր է) :

4. Տղան շատ նեղացաւ այս բանիս համար , վասն զի . . . (Երկու պարտաւորութիւն) :

23 Հրահանգ

Գլխաւոր նախադասութիւնները դուած են . աւակերտը պարբերութիւններ թող կազմէ պատշաճ շաղկապները դնելով եւ հարցումներուն պատասխանը գտնելով :

1. Մտողքս զիս դպրոց զրկեցին (Ժամէ՞ որբելան էի , Ինչո՞ւ զրկեցին) :
2. Քրիստոս աշխարհ եկաւ (Ինչո՞ւ) :
3. Գիւղացին ցորեն կը ցանէ (Ինչպէս , Ինչո՞ւ) :
4. Քանանան պատարագ կ'ընէ (Ե՞րբ , ո՞ր , ի՞նչպէս է , որպէսն էր Ինչ կ'ընէ , Ժողովուրդն Ինչ կ'ընէ) :
5. Եղբայրս դպրոց կ'երթայ (Ե՞րբ որո՞ւ հետ , հոն Ի՞նչ կ'ընէ , Ինչ որտեղ կ'աւանտէ) :

Ծան. — Դասատուն այս եղանակով ուրիշ նիւթեր կ'առաջարկէ , միտք ջանալով աւակերտներուն հետաքրքրութիւնը արթուն պահել : Նաեւ հոգ սանիլ որ միջանկեալ մասերը գլխաւորին հետ կցելու համար պատշաճ բառերը գտնեն :

9. Թարմար բառը գտէք. — Այն մարդը որ չի տեսներ . . . է : 2. Այն՝ որ չի լսեր . . . է : 3. Այն՝ որ չի խօսիր . . . է : Այն՝ որուն մէկ ոտըը կտրած է . . . : 5. Այն՝ որ հեռուն գտնուած բան մը չի տեսներ . . . : 6. Այն՝ որուն մէկ աչքը միայն կը տեսնէ . . . : 7. Այն՝ որուն կանակը դուրս ցցուած է . . . : 8. Այն՝ որու մարմնին մէկ կողմը անզգայ եղած է եւ չի շարժիր՝ կը կոչուի . . . : 9. Այն՝ որ աչ ձեռք չունի . . . : 10. Այն՝ որուն մէկ աչքը ծուռ կը նայի . . . : 11. Այն՝ որուն զրուխը մուգ չունի . . . : 13. Այն՝ որ կմկմալով կը խօսի . . . կամ . . . է :

24. Գրասեղանս

Գրասեղանս . . . (ո՞վ շինած է , Ինչէ՞ն , Եւ Ինչպէս շինած է , Ինչ մասեր ունի այն : Ինչ կ'ընէ՞մ անոր վրայ : Գրոց սանի՞ , Բըլ Ինչ կը շինէ՞մ , Եւայն) :

25. Մեր եզները

Մենք ունինք երկու եզ . . . (Ինչպէ՞ս են — Գոյն , հասակ , Եւայն : Ինչ մասեր ունի անոնց մարմնը : Ո՞ր կը բնակին , Ինչ կ'որբեն : Ինչ բանի կը փորձած ենք : Ինչ օգտաւոր ունին Բեղի) :

26. Հրահանգ

Սա խօսքերն ամբողջացուցէք :

1. Ի՞նք չտուած՝ . . . :
2. Հայնին ճար կայ . . . :
3. Ի՞նչ ընէ՞մ աշխարհի մեծութիւնը , քանի որ . . . :
4. Հաստ ու բարակ մէկ գին է , վա՛յ . . . :
5. Մինչեւ հաստը բարակնայ , . . . :
6. Երբ տանն հոգիէ մէջմէկ ոսկի առնեմ . . . (Ինչ կ'ոտնենամ) :
7. Մարդս մինակ հացով չ'ապրիր , այլ . . . :
8. Մէկ կայ հազար կ'արժէ . . . :
9. Ես գանձ կ'ըսեմ , դու . . . :
10. Կերակուրը պատրաստ չէ , ուստի . . . :
11. Մօրուք չունիմ որ . . . :
12. Մկրտիչ բալն իջաւ որպէս զի . . . :
13. Մինչեւ որ չցանես . . . :

10. Գոյականները գտէք. — 1. . . . ին մէջ հիւանդներ կը դարմանուին : 2. . . . ի մէջ տղաք կը կրթուին : 3. . . . շէնք մ'է ուր ներկայացումներ կը կատարուին : 4. Կերակուրը կը ծամենք . . . ենթով եւ կը մարսենք . . . ով : 5. . . . ի մէջ կ'ազան ալիւր . . . ի մէջ կը թրեն , եւ . . . ի մէջ եփելով հաց կը պատրաստեն : 6. Անոնք որ բրիտանեան թեման համար մեռան , . . . կամ . . . կը կոչուին : 7. . . . եւ . . . առաքեալները Հայ ազգին մէջ ներմուծեցին բրիտանեան թեմանը : 8. . . . ը լեռներէն վար հոսելով՝ կը կազմէ վտակ եւ գետ , յետոյ կ'երթայ . . . ին մէջ կը թափի :

27. Աւագ Եարար

1. Աւագ շարաթ իրիկու, Օննիկ եկեղեցիէն տուն եկաւ հօրը հետ :
2. Ընթրիքը պատրաստ էր, Օննիկ տեսաւ սեղանին վրայ շարուած . . . (է՛նչ է՛ր) :
3. Մեծ ախորժակ ունէր ուտելու, վասն զի . . . :
4. Սեղան նստան ամէնքը, միայն Օննիկ ոտքի վրայ կեցած . . . (է՛նչ Ըսաւ), յետոյ նստաւ հօրը քով եւ ընթրեց :
5. Ընթրիքէն վերջը, հրաման առաւ ու գնաց պառկեցաւ . . . (է՛նչ է՛ր) :
6. Սրտին մէջ ուրախութիւն մը կը զգար . . . (է՛նչ յորաձեւով) :

28. Հրահանգ

Սա խօսքերն ամբողջացուցէք :

1. Հաւ է մօտիկ գրացին քան . . .
2. Գիտակ զասը չէ պատրաստած, ասոր համար . . .
3. Շողենաւը պատրաստ է, ուրեմն . . .
4. Թէ շան հետ ընկերանաս . . .
5. Ես դեռ հինգ տարեկան էի երբ . . .
6. Տղադ զպրոց զրկէ որ . . .
7. Պատին վրայ կը քայլէի, յանկարծ . . .
8. Մագերդ շատ երկնցեր են, գնա՛ . . .
9. Բարեկամը գլխուն կը նայի, իսկ թշնամին . . .
10. Խելացիին հետ քար կրէ, անխելքին հետ . . .
11. Գրացիիդ կով մը ուզէ որ . . .
12. Ուրախ եմ որ . . .
13. Հրանտ կաղաժարին զպաւ եւ . . .

11. Գտէք բայերը. — 1. Ուրիշի իրաւունքը բռնի ձեռք անցընելն է . . . 2. Խոտ կերցնելու համար սչխարներն արօտավայր տանիլը կը կոչուի . . . 3. Բան մը երկու անգամ գրուցելն է . . . 4. Վայրի կենդանի մը կամ թռչուն մը տան մէջ ապրելու վարժեցընելն է . . . 5. Իր շահածէն ստակ աւելցընելն . . . 6. Կամէն մածուն շինելու գործողութիւնը կը կոչուի . . . 7. Հաւկիթը եփելու համար եռացած ջուրի մէջ դնելն է . . . 8. Բացակայ անձի մը վրայ գեշ խօսիլն է . . .

29. Պարզեւարաշխութիւն

Հետեւեալ հասուածն ընթերցանութիւն ընելէ ետք, բառերն ու իմաստները մեկնեցէ՛ք եւ ստորեւ դրուած հարցումներուն բերանացի եւ գրաւոր պատասխանեցէ՛ք : (Այսպէս նաեւ ուրիշ հասուածներ) :

Ա. . . վարժարանի պարզեւարաշխութեան նախորդ օրն էր. մեծ ոգեւորութիւն կը տիրէր աշակերտներուն մէջ, եւ ամենէն յաջողակներն, անոնք որ միշտ ուշագիր եղած էին դասերուն, կը խօսակցէին հետեւեալ օրուան յոյսերուն վրայ : « Ի՛նչ ուրախութիւն պիտի զգան ծնողքս, եթէ շատ պարգեւներ ստանամ, կ'ըսէր Հրաչեայ : — Հապա իմ ծնո՞ղքս, կ'ըսէ Ղեւոնդ. տարին ի բուն տքնեցայ, որպէս զի կարենամ այս ուրախութիւնը վայելել տալ անոնց : — Բէ՛հ, ըսաւ Հրանտ, որ դատարկապորտ տղայ մ'էր եւ միայն խողի վրայ կը մտածէր. այնքան իրարանցումի նարկ չի կայ, քանի մը գիրքի ու պսակի համար այնչափ յոգնիլ տքնիլ յիմարութիւն է, ես՝ կրցածիս չափ քիչ կ'աշխատիմ, հանգիստս կը նայիմ, մնացածը հոգս չէ : »

Յաջորդ օրը հանդիսաւոր վայրկեանը կուգայ, յազթականներուն անունը կը հռչակուի : Հրաչեայ ու Ղեւոնդ շատ մը պարգեւներ կ'տանեն. օրուան գիւցազնը անոնք են. ամէն մարդ կը շրջապատէ ու կը շնորհաւորէ զիրենք : Հրանտ, տեսնելով անոնց այսքան բաղդաւորութիւնը, սրտին մէջ անձկութիւն մը կը զգայ եւ աչքերն արցունքով կը լեցունին : Հիմա ինք ալ կը ցանկայ շահելու արժանի ըլլալ մէկ քանին այն պսակներէն որոնց կարեւորութիւն չէր տար երէկ, կը զղջայ տարին մէջ

12. Գտէք կիցական բառ սա մասնիկներով. — 1. ակուն, 2. ային, 3. աւոր, 4. եղեն, 5. եայ, 6. եան :

ըրած անհոգութեանն համար, եւ մօրը կը խոստանայ եւ
ուանդով աշխատիլ ապագային, որպէս զի օր մը իր մայրն
ալ առիթ ունենայ պարծելու՝ զաւկին յաջողութեանց
վրայ:

Աշխատութիւնը հաճոյք կը պատճառէ եւ ոչ թէ
զուարճութիւնը:

30. Հարցումներ

1. Պարզեւարաշխութեան առջի օրն ի՞նչ կ'անցնէր
Ա. Դպրոցին մէջ:
2. Յաջողակ աշակերտներն ի՞նչ կ'ըսէին իրարու:
3. Անհոգ աշակերտն ի՞նչ կ'ըսէր:
4. Պարզեւարաշխութեան օրն ի՞նչ պատահեցաւ եւ
որո՞նք յաղթական հռչակուեցան:
5. Հրանտ ի՞նչպէս էր եւ ի՞նչ զգաց: Ի՞նչ բանի կը
ցանկար, ի՞նչ խոստացաւ մօրը:
6. Ի՞նչ կրնաք հետեւցընել այս մանրավէպէն:

31. Հրահանգ

Վերոյիշեալ հասուածն համառօտեցէ՛ք:

13. Գոյականները գտէ՛ք. — Շատ մը տուններ միանալով կը
կազմեն... մը: 2. Շատ մը զիւղեր միանալով կը կազմեն... մը: 3. Շատ
մը թաղեր միանալով կը կազմեն...: 4. Շատ մը քաղաքներ միանալով
կը կազմեն... մը: 5. Կառավարութիւնը որ երկրի մը կ'իշխէ, կը կոչուի
...: 6. Պետութեան այն քաղաքն ուր կը բնակի Սպագաւորը, կը կոչուի
...: 7. Քաղաքէն քիչ հեռու գտնուող բնակարանները կը կոչուի:



Գ. Շ Ր Զ Ա Ն

ՇԱՐԱԴՐՈՒԹԵԱՆ ՆԻՒԹԵՐ

1. Բարի տղան

1. Բարի տղան, առտուն արթննալուն պէս, (Ի՞նչ
կ'ընէ): 2. Ի՞նչպէս կ'աղօթէ...: 3. Ի՞նչ կ'ըսէ...
(Գրեցէ՛ք այդ աղօթքը):

2. Ագարակիւն

1. Ագարակի մէջ խնձորենի մը: 2. Ագարակապանն
ամէն տարի ընծայ կը զրկէ ագարակատէրին: 3. Բայց
ան դժգոհ էր (Ի՞նչո՞ւ) եւ իր այգին փոխադրել կուտայ
ծառը որ կը չորնայ... (Ի՞նչո՞ւ): 4. Զղջում ագարա-
կատիրով (Ի՞նչո՞ւ-ցէ՛ք շինքը): 5. Բարոյական:

3. Գեղացին ու ակնոցը

1. Մերերն ակնոց կը գործածեն կարգալու համար:
Գեղացի մը ուզելով ակնոց մը գնել (Ի՞նչո՞ւ)...
կերթայ... (ո՞ր): 2. Ակնոցավաճառը շատ մը ակնոց-
ներ կը ցուցընէ: Գեղացին չի հաւնիր: 3. Ակնոցավա-
ճառը սրանեղած՝ կ'ըսէ. «Բարեկամ, գուցէ կարգալ
չէք գիտեր»: 4. «Եթէ կարգալ գիտնայի...»:

4. Վաեռամի առաջին նամակը իր հօրեղբօր աղջիկին

1. Տեղ, թուական եւ վերնագիր: 2. Վահրամ կ'ըսէ
թէ իր առաջին նամակն է աս. հիմա նամակ գրելու հա-

14. Հեծեւայնիւրուց կցեցէ՛ք բառ մը, որ նոյն էակին կամ

- առարկային արտաբերման մասը կամ պահարանը հօսանալէ.** —
1. Ընկոյգին —
 2. Զուկին —
 3. Կրիային —
 4. Հացին ու նարինջին —
 5. Իշուն —
 6. Սոխին —
 7. Անկողինին ու սեղանին —
 8. Գրքին —
 9. Դաշոյնին ու ծուրին —
 10. Բարձին ու վերմակին —
 11. Ակ-
նոցին, ձիախոտին —
 12. Օձին —
 13. Նամակին —
 14. Զիւռն —
 15. Երեսին —
 16. Գլխուն —
 17. Մեռելին —

մար պէտք եղածներն ունի . . . : 3. Կը յիշէ օրն պատուէրները զորոնք երէկ տուաւ դասատուն՝ նամակագրութեան մասին : 4. Վահրամ կը մտածէ թէ նամակ մը ի՞նչպէս վերջացընելու է : 5. Իր հօրեղբօր աղջկան յարմար ձեւը կը գտնէ վերջապէս : Ստորագրութիւն : 6. Հասցէ :

5. Առիւծն ու մուկը

1. Մուկերը կը զրօսնուն . անոնցմէ մէկը առիւծին թաթերուն մէջտեղ կը մնայ : 2. Առիւծը կրնար . . . բայց վեհանձնարար թողուց զայն : 3. Ուրիշ օր մը առիւծը ցանցի մէջ կը բռնուի . — տանջանք եւ մոնչիւններ : 4. Մկնիկն օգնութեան կը հասնի ու կ'ազատէ . . . (է՛նչպէս) : 5. Բարոյական :

6. Մահ Աբէլի

1. Ազամ երկու որդի ունէր . . . : Աբէլ՝ հովիւ եւ Կայէն՝ երկրագործ : 2. Աբէլի զոհերն Աստուծոյ հաճելի էին : 3. Կայէն կը նախա՛ծի ու կը սպաննէ եղբայրը : 4. Անէծք Աստուծոյ : 5. Ի՞նչ եղաւ Կայէնի վախճանը :

7. Կուժը

1. Թագաւոր մը բազմաթիւ հետեւորդներով ոսկերչի մը խանութ կ'երթայ գոհարեղէններ գնելու : Դուրս ելլելու վրայ էր , երբ վաճառականը գաղտ կ'իմացնէ աւոր թէ հետեւորդներէն մէկը մատանի մը գողցած է (խօսեցոյցէ՛ք վաճառականը) : 2. Թագաւորը նորէն խանութ կը մտնէ ու կը հրամայէ աւազով լի կուժ մը բերել (խօսեցոյցէ՛ք վաճառականը) :

15. Սա խօսքերն ամբողջացուցէք . — 1. Աշխատէ եւ խնայէ երիտասարդութեանդ տանն , որպէս զի . . . : 2. Անծանօթ բոյս մը բերանդ տաննելու չես , զուցէ . . . : 3. Դուն ուրիշներուն հաճելի եղիր որպէս զի . . . : 4. Դժբաղդները մի՛ ժողրեր , զուցէ օր մը . . . : 5. Սա ճերմակեղէնները տար փռէ եւ մի՛ ժողվեր , մինչեւ որ . . . : 6. Մրցանակ չկրցայ առնել , թէպէտեւ . . . : 7. Մրցանակ չառաւ , անոր համար . . . :

սեցոյցէ՛ք վաճառարը) : 3. Յետոյ իր հետեւորդները կը հրաւիրէ գալ կարգաւ մխել իրենց ձեռքն աւազին մէջ (ըտէ՛ք , ինչո՞ւ այդպէս կ'ընէ) : 4. Մատանին կը գտնուի : 5. Բարոյական :

8. Տօնի առիւ շնորհաւորութիւն՝ մեծ հայրին

1. Տեղ , թուական եւ վերնագիր : 2. Երեք տարի չի կայ որ դպրոց կ'երթամ . . . : 3. Գիրս քիչ մը խօշոր է , բայց կամաց կամաց պիտի վարժուիմ . . . եւ գալ տարի . . . : 4. Ծնորճաւորութիւն եւ բարեմաղթութիւն . . . : 5. Վերջաւորութեան ձեւ , ստորագրութիւն : 6. Հասցէ :

9. Անմեղ սախօսութիւն

1. Կոյր ծերունի մը եւ իր թոռնիկը կը մուրան (նկարագրեցէ՛ք իրենց արեւահարեւ վիճակը) : 2. Օր մը իրենց աղքատիկ ճաշն ընելու համար կը նստին տեղ մը (խօսեցոյցէ՛ք կոյրը) : Պատառ մը հաց միայն կար : Մանուկը զայն հաւին կուտայ (է՛նչ կը խօսակցին) : 3. Խորհրդածութիւն մը ըրէք մանուկին այս բարեգործութեան վրայ :

10. Զուրակն ու նպտը

1. Զութակահար մը նուազահանդէսի մը գացած է — Ծափահարութիւն՝ իր ճարտար նուազածութեան համար : 2. Զութակն ու ճպտը կը վիճարանին իրենց փոմար :

16. Գոյականները զտէք . — (Պատասխաններն ամբողջ պարբերութիւն պէտք է ըլլան) . — 1. Ի՞նչ կը կոչուի այն մարդը որ երկիր բերուրդ կ'առնէ : 2. Այն որ զէնք կը կրէ : 3. Այն որ բանակի մը կը հրամար կը կառավարէ : 4. Այն որ գօթ կը վարէ : 5. Այն որ ժողով կը վարէ : 6. Այն որ պեմայէ : 7. Այն որ թագաւորէն վերջը տառնան մը խորհուրդներուն կը մասնակցի : 8. Այն որ բազմաթիւ մը գործերը կը պետութեան ղիտուոր պաշտօնն ունի : 9. Այն որ բազմաթիւ մը կը վարէ : 10. Այն որ պեմայէ : 11. Այն որ սուրբան մը բով ուրիշ պետութեան մը ներկայացուցիչն է : 12. Այն որ ուրիշ մը գործերը կը կատարէ : 13. Այն որ ուրիշ մը զրկուած է գործի վրայ բանակցելու համար :

խաղարձ արժանիքին վրայ : 3. Ճպոտ ու ջուլթակ իրենց տեղը կը դրուին եւ ա՛լ ձայներնին չի լսուիր : 4. Բարոյական :

11. Երեւ մեծ բժիշկներ

1. Տաղանդաւոր բժիշկ մը մեռնելու վրայ է : Ուրիշ երեք բժիշկներ զինքը կը խնամեն (նկարագրեցէ՛ք այս գրեթէ րանը) : 2. Մահամերձը կ'ըսէ թէ իրմէ վերջը երեք մեծ բժիշկ կը թողու (խօսեցո՛ւցէ՛ք զինքը) : 3. Դարմանող բժիշկները կը թախանձեն որ ըսէ անոնց անունները (ինչո՞ւ) : 4. Մահամերձն երեք անուն կուտայ (որո՞նք են) :

12. Նամակ առ ուսուցիչն

1. Տեղ , թուական եւ վերնագիր : 2. Աշակերտ մը թոյլատուութիւն կը խնդրէ ուսուցչէն , յաջորդ երկուշարթի դպրոցէն բացակայ գտնուելու (ցո՛ւցո՛ւցէ՛ք պարծո՛ւմը) : 3. Իր փաստերը կը պարզէ (փաստեր գրէ՛ք) : 4. Կը խոստանայ կորսուած ժամանակը շահիլ (ինչո՞ւ) : 5. Վերջաւորութիւն եւ ստորագրութիւն : 6. Հասցէ :

13. Ջրհեղեղ

1. Մարդիկ առաքինութենէ կը հեռանային : 2. Աստուած որոշեց զանոնք ջնջել : 3. Նոյ միայն կը մնար Աստուծոյ հաւատարիմ (ինչ կ'ընէր) : 4. Աստուած անոր

17. Խօսքն ազդու ընող բառը դե՛ք զիճեռուն տեղ . — ՍԻՐԱՄԱՐԳ . Սիրամարդը — թռչուն մ'է . իր տեսքը , կազմութեան համեմատութիւնը , — ու — քաղցածքը կը զմայլեցընեն մարդը . ինքն ալ կարծես , կը սքանչանայ իր զեղեցկութեան վրայ : Սիրամարդին — փետուրներն , որ — ծաղիկներէն զերազանց փայլ մը ունին , ամէն տարի զօյներնին կը նետեն ու կը թափին : — ձայն մը ունի եւ — կը թռչի : Քնանալու համար ծառի վրայ կը թառի , կամ տանիքի վրայ կը կծկտի : Հաւնոցները շատ անգամ տակն ու վրայ կ'ընէ եւ պարտէզներն անապատ կը դարձնէ : Էզը չունի արուին — տեսքը , մանաւանդ — եւ — տտուներ :

յայտնեց իր միտքն , ու պատուիրեց որ . . . : 5. Պատուհասը կը սկսի . երկինքէն հեղեղներ . . . (ինչ կ'ընէ մարդիկ եւ կենդանիներ) : 6. Ջուրերը կը սկսին քաշուիլ : Նոյ կ'արձակէ ազուա մը . . . յետոյ աղանձի մը . . . : 7. Նոյ կ'ընէ տապանէն եւ . . . (ինչ կ'ընէ) : 8. Ծիածան :

14. Մտի արքունիքն

1. Սենեակին մէջ , բաց պատուհանին մօտ , Մարիամ կ'աչխատի : Առջեւը կատուն նստած՝ կը լիզէ իր ձագը : 2. Յանկարծ ճնճղուկ մը ներս կը մտնէ (նկարագրեցէ՛ք երանո՞ւրդը) : Կատուն կը ցատքէ ճնճղուկին վրայ : 3. Մարիամ իսկոյն կատուին ձագը կը բռնէ եւ այնպէս կը ձեւացընէ թէ պատուհանէն վար նետել կ'ուզէ : Այն ատեն , կատուն թող կուտայ ճնճղուկը : 4. Մարիամ կը բռնէ զայն եւ կը թողու որ ազատ թռչի :

15. Կրկնակ խրատ

1. Դեռահասակ սպասաւոր մը , Պետրոս , չատ անգամ իր տիրոջը կողմէ պտուղ կամ երէ կը բերէր հարուստ բայց կծծի պարոնի մը : 2. Օր մը , դարձեալ , Պետրոս նապաստակ մը ընծայ կը բերէ , անքաղաքավար կերպով : 3. Պարոնը կը բացատրէ թէ ինչպէս վարուելու էր : 4. Պետրոս , թիկնաթոռին վրայ բազմած , այնպէս կը ձեւացընէ թէ պարզեւ կուտայ անոր : (Այս ամէնը խօսակցութեան յետո՛ւ նկարագրեցէ՛ք) :

16. Կաղանդի առքիւ նամակ առ կնիստայրն

1. Տեղ , թուական եւ վերնագիր : 2. Այսպիսի հանդիսաւոր օր մը ձեր կնքահօր շնորհաւորական նամակ դրել պարտք կը համարիք եւ նամակագրութեան գրքէն այնպիսի նամակ մը օրինակելով զրկել փորձուեցաք . . . :

18. Գե՛տք սա մասնիկներով վերջացող բառեր . —

1. եղ , 2. ուս , 3. ոտ , 4. կոտ , 5. ենի , 6. ի :

3. Սակայն նախամեծար կը սեպէք որ գաղափարները ձեզմէ բղխին: Նոր տարիին առթիւ շնորհաւորութիւններ: 4. Ի՞նչ գրելու էք ձեր ծնողքին կողմէ: 5. Վերջաւորութիւն եւ ստորագրութիւն: 6. Հասցէ:

17. Ակիւռն ու Ընծառիւծը

1. Սկիւռ մը ծառին վրայէն կ'իջնայ Ընծառիւծի մը թաթերուն մէջտեղ: Ընծառիւծը կ'ըսէ անոր. «Կը շնորհեմ կեանքդ եթէ ըսես թէ ինչո՞ւ այդքան զուարթ ես»: 2. Սկիւռը կը խոստանայ պատասխանել, եթէ ընծառիւծը թոյլ տայ որ ծառին վրայ ելլէ (խօսեցո՞ցե՛ք դե՛ռն): 3. «Զուարթ եմ, վասն զի խիղճս հանդարտ է» (ընդլայնեցե՛ք այ՞ խօսե՛րը): Ընդհակառակն ընծառիւծը ախուր է վասն զի . . . : 4. Բարոյական . . . :

18. Աջ ու ձախ ձեռքեր

1. Աջ ձեռքն հպարտութեամբ կը թուէ ծառայութիւնները զորոնք կը մոտուցանէ մարդուն, եւ կը մեղադրէ ձախ ձեռքին անգործութիւնը: 2. Ձախն ինքզինք պաշտպանելով կ'ըսէ թէ մարդիկ քիչ կրթութիւն կուտան իրեն, եւ թէ, ասով հանդերձ, ինքն ալ կրցածին չափ օգուտներ կ'ընծայէ . . . : 3. Կ'եզրակացընէ՝ կոչում ընելով միաբանութեան ոգիին:

19. Բարեխօսի աշտարակը

1. Նոյի երեք որդիները: Անոնց սերունդները կը բազմանան ու կը ցրուին: 2. Իրարմէ բաժնուելէ առաջ, կ'ուզեն աշտարակ մը շինել որուն ծայրը . . . : 3. Սկսան հսկայ ձեռնարկը . . . : 4. Աստուծոյ պատիժը, լեզուներու խառնակութիւնը:

19. Ածականները վերացեալ անուան փոխեցէ՛ք. — ձը՛ւ մարիտ, բարի, չար, տղիկ, գեղեցիկ, ազնիւ, Պարմ, պարզ, սպիտակ, ծաղրածու, տաք, համակիր, անուշ, հետաքրքիր, անգուժ, ՊՊու, Պանձր, գուարթ, գործունեայ:

20. Աղջիկ մը՝ իր եղբօրը (նամակ)

1. Տեղ, թուական եւ վերնագիր: 2. Ձմեռը կը մօտենայ եւ Ջարուհի կը ցաւի եղբօրը վրայ որ գպրոցին մէջ կը մտի գուցէ: 3. Կը ծանուցանէ թէ չորս զոյգ բողէ գուլպայ կը ղրկէ: 4. Կը խնդրէ եզրօրմէն յիշել քոյրն, երբ գուլպաներն հագնի: 5. Կը յանձնարարէ որ, երբ մաշին, զանոնք իրեն վերադարձընէ՝ ծակերը լեցընելու համար: 6. Գորովալից վերջաւորութիւն եւ ստորագրութիւն: 7. Հասցէ:

21. Գանձանակը

1. Փոքրիկ Գէորգ բարի ու աշխատասէր էր: Հայրն ամէն չարաթ քառասուն փարա կուտար անոր: Գէորգ իննայասէր էր . . . : 2. Տարիին վերջը կը բանայ իր գանձանակն, յուսալով անոր մէջ գտնել . . . : 3. Ջարմանալի՛ բան, մէջը հարիւր դահեկան կար . . . : Ծնողքն, առանց բան մը ըսելու, իննայած ստակին վրայ . . . դահեկան աւելցուցեր էին. . . : 4. Գէորգ նոյն գումարով . . . :

22. Սանդուղը

